

Մ Ա Ռ Յ Ի Կ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

Ի է Տ Ա Ր Ի, 2008, Թ Ի Ի 2 (308) VOL. XXVII N° 2

السنة السابعة والعشرون العدد الثاني



LՆԿԱՍ 2008

ՀԱՄԱՏՔ, ՍԷՐ ԵՒ ՄԻՈՒԹԻՒՆ

90 տարի առաջ՝ 1918ին, հայ ժողովուրդը խորհուրդ խորին զօրութեամբ կերտեց իր վարդա-հեղեղ ապագան: Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսական ծակատամարտներով՝ 1918 Մայիս 28ին ծնունդ առաւ Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, իսկ նոյն տարւան Նոյեմբեր 16ին խումբ մը իմաստուն եւ տեսլապաշտ հաւատացեալներու յղացումով կեանքի կոչուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Մեր ապագայատեսիլ հերոսները Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւն կերտեցին, որովհետեւ ունեին ամրակոշտ հաւատք իրենց ազգային ըմբռնումներուն մէջ, տենդագին սէր՝ իրենց ժողովուրդին նկատմամբ եւ արտակարգ նուիրում, զոր փաստեցին իրենց կեանքով, եւ կեանք տուին հայոց պատմութեան նորագոյն հրաշքին՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի համագ-գային գաղափարին:

Հ.Ս.Ը.Մ.ի պատմակերտ հիմնադիրները իրենց անաղարտ հաւատքով եւ հայավայել վճռականութեամբ հիմը դրին հայ պատանիին ու երիտասարդին հոգին, միտքը եւ մարմինը կերտող մեծ դպրոցին եւ յղացան մեր նշանաբանը՝ «Բարձրացի՛ր բարձրացո՛ւր»ը, որ կը մարմնաւորէ գերակշիռը, այսինքն՝ իր անձէն առաջ եւ իր անձէն ետք, իր նմանին ծառայելու նուիրական ոգին ու յանձնառութիւնը, ամբողջական հաւատարմութիւնը:

90ամեայ մեր պատմութիւնը հարուստ եղաւ բացառիկ սխրագործութիւններով, իսկ միութենական կեանքը՝ անջնջելի ձեռքբերումներով եւ անոնց միշտ ուսանելի դասերով:

Յորելեանները առիթներ են, որպէսզի առաջին հերթին արագ ակնարկ մը նետենք մեր իրագործումներու ծանապարհին վրայ, ո՛չ միայն արձանագրուած յաղթանակներով հպարտանալու եւ պարծենալու, այլեւ՝ ինքնաճանաչման ու ինքնաքննարկման լոյսով մեր ներկան յստակ տեսնելու եւ հաստատ քայլերով դէպի ապագայ առաջ-նորդուելու համար:

Թէեւ 90ամեայ անցեալ ունինք, բայց շատ երիտասարդ ենք տակաւին: Եւ կոչուած ենք այդպէս ալ մնալու, որովհետեւ միշտ ապրեցանք նոյն խանդով ու միեւնոյն ստեղծագործ հաւատքով: Այդպէս է նաեւ մեր ներկան, ինչպէս եւ տարբեր չի կրնար ըլլալ ապագան: Հետեւաբար, պէտք է ձգտիլ նպատակասլաց կեանքի ոգին ու պահանջը միշտ կենդանի պահելու նպատակակէտին: Ահա թէ ինչո՛ւ, այսօր, մենք յաւելեալ վճռականութեամբ եւ անխախտ հաւատքով պիտի շարունակենք Հ.Ս.Ը.Մ.ի անդեղեւ եւ հաւատաքայլ երթը:

Այս կը պահանջէ նաեւ ազգը, մեր ներկան ու ապագան, եւ ասիկա անժամանցելի, անփոխարինելի ու համահայկական պահանջ մըն է, որ առաջին հերթին կը պահանջէ Հաւատք, Սէր եւ Միութիւն: Կ'ենթադրէ՝

Լսել խղճին ձայնը՝ անեղծ հաւատքով միշտ դէպի հաւատքն ու ճշմարիտը ուղղուելու համար:

Գերադասել հայ լեզուն, հայ մշակոյթը, հայկական արժէքները, աւանդութիւններն ու ազգային նկարագիրը:

Հետապնդել մեր ժողովուրդի արդար եւ անժամանցելի դատը:

Յանձնառու ըլլալ գոհողութեանց ու գիտակցօրէն նուիրուիլ:

Անշահախնդրօրէն գործել եւ տալ անմնացորդ հաւատարմութեամբ:

Յամառօրէն պայքարիլ դժուարութեանց դէմ՝ Հայկերու վճռականութեամբ եւ Վարդաններու զօրութեամբ:

Միասին զգալ, միասին մտածել, միասին գործել, միասին յառաջ ընթանալ եւ միասին բարձրանալ բարձունքէ բարձունք:


Եկէք, միասնաբար ընթանանք դէպի հաւատքի, սիրոյ եւ միասնականութեան պայծառ ուղիին հորիզոնները, առաջնորդուինք հայակերտ ու մարդակերտ նուիրական նոյն արժէքներով, որոնք մեր նահատակներէն ու հիմնադիրներէն մեզի փոխանցուած այն եզակի ժառանգն ու կտակ են, որ պիտի լուսաւորեն մեր ե՛ւ ներկայի, ե՛ւ գալիքի ճամբան:

Հ.Ս.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԹԻՒՆ ՆԻՒՆԵՐՆ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزیک مجله ریاضیه شهریه تصدیرها جمعیه المومتمن الریاضی



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻԷ. ՏԱՐԻ, 2008, ԹԻՒ 2 (308)



23

Հ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Յուշեր	3
■ Ակնարկ	5
■ Մեր Տեսակցությունները	8
■ Պատմութեան Համար	11
■ Հանրաժանօք Հ.Ս.Ը.Մ.ականներ	16
■ Մասնաճիւղէ Մասնաճիւղ	19
■ Մեր Կորուստները	37



34



8

ԲԱԺԻՆՆԵՐ

■ Գեղարուեստ	15
■ Հայագի Դէմքեր	16
■ Հետաքրքրական	17
■ Մանկապատանեկան	38
■ Տարբեր Հայեացքով	40

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աբօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի ճէճեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Վազգէն Տէր Ղուկասեան*, Սամուէլ
 Սկրտիչեան, Սագօ Գասարճեան,
 Կարպիս Գոլյումճեան,
 Սալբի Լատոյեան եւ
 շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Զարեհ Զեօրեքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրճ Համուտ, Եինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 35000 լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Ս.Ը.Մ.ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՆԱՐԱՅ

ԲԱՐՉՐԱՑԻՐ...

Կեանքը շարժում է: Ոչ՝ մեքենական, բռնագբօսիկ, այլ՝ ինքնաբո՛ւխ: Անով կը սնանի, կը մեծնայ մարդը: Անշարժութեամբ մահը կը դառնայ բռնապետ իշխան:

Շարժում է նաեւ բարոյական կեանքը: Մարդու մը բարոյական կեանքը կրնայ շարժիլ հակոտնեայ երկու ուղղութեամբ: Դէպի վար՝ եսամոլութեան, շահախնդրութեան, անբարոյութեան մղումներով, եւ դէպի վեր՝ գոհաբերութեան, պարկեշտութեան եւ բարոյականութեան սկզբունքներով: Ամէն մարդու մէջ գոյութիւն ունին իրերամերժ այս տրամադրութիւնները՝ դէպի վսեմն ու դէպի գռեհիկը, դէպի կատարն ու խորխորատը: Ամէն մարդու կուրծքին տակ թաքնուած է չարագործ մը եւ բարեգործ մը: Եւ իւրաքանչիւր մարդու ազատ ընտրութենէն կախեալ է մէկուն կամ միւսին յաղթանակը: Սէկը կամ միւսը պէտք է մեռնի, որպէսզի իշխէ երկրորդը: Այդ կռիւը մղելու համար կ'ապրինք: Այդ կռիւին մէջ յաղթանակ տանելու համար կ'արժէ՛ որ ապրինք:

Յ.Ս.Ը.Ս.ի 90ամեակին առիթով, երբ քանիերորդ անգամ ըլլալով կը վերընթերցենք միութեան սկաուտական դաւանանքը, գոհունակութեամբ կը նկատենք, որ անոնք՝ Յ.Ս.Ը.Ս.ի սկաուտները, Յ.Ս.Ը.Ս.ականները առհասարակ, որոշած են ընտրել բարեգործը, մերժել չարագործը. բարձրանալ ամէն գնով, ու երբեք՝ խրիլ:

Դաւանանքը կը բաղկանայ 12 կէտէ: Իւրաքանչիւր կէտ ինքնին մեծ արժէք ունի: Ան կը կազմէ նկարագրի բնորոշ մէկ գիծը բարեգործին, որ պիտի ապրի: Իւրաքանչիւր կէտ ծանր հարուած մը կու տայ չարագործին ստորին ունակութիւններուն:

12 ոսկեղէն աստիճաններով վերելք մըն է դաւանանքը, հարուստ՝ ներքին մաքառումներով: Իւրաքանչիւր աստիճան կը պահանջէ նոր գոհողութիւն, նոր ու յաւելեալ ծիգ:

Այսպէս, դժուար ու ցից վերելք մըն է

կեանքը: Յ.Ս.Ը.Ս.ականը կը տքնի, պիտի՛ տքնի ամէն օր ու ամէն ժամ, որպէսզի կարողանայ բարձրանալ: Այն ժամուն, որ ան չի բարձրանար, կրնայ ուղղուիլ դէպի գահավիժում: Բայց գաղափարականի փայլուն աստղը զայն կը հրաւիրէ, կը քաշէ դէպի վեր: Թոյլ չի տար սահելու, սայթաքելու: Դաւանանքի կատարէն կը ժպտի կատարեալ Մարդը, որուն պէտք է հասնի Յ.Ս.Ը.Ս.ականը՝ ապրելով զգացումով, խօսքով ու գործով մաքուր կեանք մը: Պէտք է բարձրանայ ան մինչեւ կատարեալ հաւատարմութիւն Աստուծոյ եւ հայրենիքի:


Անգամ մը որ Յ.Ս.Ը.Ս.ականին մէջ արմատանայ Աստուծոյ եւ հայրենիքին հաւատարմութիւնը, անոր կեանքը կ'ըլլայ հասուն պտուղներով զարդարուած ծառ մը, կեանքը տիպար մարդուն, տիպար՝ հարազատ, զտարիւն հայուն:

Այսօր, տիպար մարդու, տիպար հայու օրինակները վտանգուած են: Ենթակայ՝ կորսուելու եւ այլասերելու: Անոր կը սպառնան շրջապատի աննպաստ պայմանները՝ համաշխարհայնացումի յորձանք, նիւթապաշտ եւ մեքենականացած առօրեայ, շահախնդիր ու անձնակեղրոն կեանք եւ այլն: Նոր սերունդին մօտ, որոնք վաղուան մեր յոյսն են, հետզհետէ աւելի արմատ կը նետեն հայութեան խորթ մոլութիւնները: Օրէ օր կը խաթարուի հայուն իսկական նկարագիրը, ինքնութիւնը: Ոչ դանդաղօրէն, սրընթաց արագութեամբ մը տեղի կու տան մարդկային արժէքներն ու տոհմիկ բարքերը, որոնց դիմաց ի յայտ կու գան ախտավարակ մօտեցումները եսին, Նիւթին, Կեղծիքին՝ երեք գլխաւոր թշնամիները բարձրացումին:

Ինչո՞ւ այս տխուր պատկերը, պարզապէս որովհետեւ անիկա բնական հետեւանքն է հիմնական պակասի մը: Կը պակսի՛ գաղափարականը, որ միշտ պէտք է շողայ մեր առջեւ եւ տեսաբար հրամայէ՝

- Բարձրացի՛ր:

ԵՐԿՈՒԻ ԵՂԲԱՅՐ ԻՐԱՐՈՒԻ ԴԷՄ ԿԸ ԽԱՂԱՆ



ՅԱՐԳԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏՈՒՐՔԱ

Ըլլայ ընտանիքի անդամ, հարազատ, բարեկամ կամ միութենական եղբայր, ենթակային անշնչացած մարմնին առջեւ մարդիկ յաճախ իրենց յարգանքի վերջին տուրքը կը մատուցանեն: Այս պարագային, հանգուցեալ եղբայր Վազգէն Տէր Ղուկասեանին անկարելորդ ու անգործածելի նկատուած գոյքերէն մաս մը աղբանոց թափուելէ առաջ, երբ յարգանքի վերջին տուրքս կը մատուցանէի, հոն հանդիպեցայ «Երկու եղբայր իրարու դէմ կը խաղան» խորագիրով իր հետեւեալ ձեռագիր գրութեան, զոր իբրեւ մարգական ոգիի տէր ֆուլթալիստի մը դաստիարակիչ յուշերը, տպագրութեան համար կը յանձնեմ «Մարգիկ» ամսաթերթին:

ԳԵՌՐԳ ԳԱՐԱՊՈՅԱԾԵԱՆ

Դեռ երէկ էր կարծես, որ եղբ. Վազգէն Տէր Ղուկասեան հրաժեշտ կու տար այս կեանքին: 86 տարիներու շալակը ուսին՝ ան կը մեկնէր անաղմուկ եւ անշուք, իր վերջին օրերը Պէյրուսի Ազգային Ծերանոցին մէջ անցընելէ ետք:

Չորս տարին կարծ ժամանակ է եղբ. Վազգէնին անդարձ մեկնումի գաղափարին հետ հաշտուելու համար: Եղբ. Վազգէն տակաւին ներկայ է շատերու մտքին եւ հոգիին մէջ: Ահա՛ օրինակ մը, Ազգային Ծերանոցի տնօրէն եղբ. Գէորգ Գարապոյաճեանէն, որ մեծ անակնկալ մը մատուցեց «Մարգիկ» խմբագրութեան, երբ եղբ. Վազգէնին անտիպ մէկ յուշը, թանկագին մատուցի արժէքով, յանձնեց հրատարակութեան:

Ստորեւ այդ յուշը եւ գայն ներկայացնող եղբ. Գարապոյաճեանի սրտի խօսքը:

1945

-1946 տարիներուն, գործով Պէյրուսի մնացի եօթը ամիս: Երբ Պէյրուսի ֆուլթալի խումբերը իմացան Պէյրուսի ըլլալս, առաջարկեցին որ իրենց հետ խաղամ, բնականաբար նիւթական խոստանալով ինծի: Ես մերժեցի, ըսելով թէ Հ.Մ.Լ.Մ.ը նիւթականով չեմ ծախեր, քանի որ Հ.Մ.Լ.Մ.ի ընտանիքին մէջ մեծցած եմ եւ հոն սորված եմ բոլոր տեսակի մարգախաղերը: Ըսին, թէ ուրեմն ի՞նչ կ'ուզես: Պատասխանեցի թէ ո՛չ մէկ բան: Ես Հ.Մ.Լ.Մ.էն կը խաղամ, քանի որ իմ խումբս է: Պնդեցին եւ ըսին, որ եթէ առաջարկուած գումարը քիչ կը գտնես, կ'ընանք բան մը աւելցնել: Ասոր վրայ պատասխանեցի, թէ նիւթականը ինծի համար արժէք չունի, զիս միմիայն կը հետաքրքրէ Հ.Մ.Լ.Մ.ի խումբը: Ինծի համար մեծ պատիւ է Հ.Մ.Լ.Մ.էն խաղալ: Պատասխանիս վրայ, քովս եկողները իրենց գլուխները շարժեցին եւ զարմանքով ետ վերադարձան:



Վերջը, ժամանակ մը անցնելէ ետք, լսեցի թէ մերժումս սկսած են օրինակ բերել բոլոր խաղացողներուն, ըսելով թէ՛ տեսէ՛ք թէ ի՞նչպէս Հ.Մ.Լ.Մ.ի խաղացողները կապուած են իրենց միութեան, որ նոյնիսկ դրամով չենք կ'ընար զիրենք առնել:

Ինծի համար, Հ.Մ.Լ.Մ.ի շարքերէն անցածը չի կ'ընար ուրիշ տեղ երթալ, որովհետեւ Հ.Մ.Լ.Մ.ը կու տայ ազգային ոգի, կը սորվեցընէ հայ մնալ, եւ հայ մնալով միայն մենք կը հասնինք մեր նպատակին, կը հասնինք կատարին: Դրամը շատ շուտ կը վերջանայ, բայց Հ.Մ.Լ.Մ.ական մնալով կ'ունենանք հաճոյք եւ

պատիւ, ինչ որ անկարելի է դրամով ձեռք բերել:

Սիրելի եղբայրներ, դրամէն մի խաբոււիք: Դրամը անցողական է, բայց Հ.Մ.Ը.Մ-ը եւ հայութիւնը յաւիտենական են:

Վերադառնալով պատմութեան, ըսեմ, որ ես մնացի ու խաղացի Հ.Մ.Ը.Մ-էն, մինչեւ Հայկազ վերադարձս: Մենք շահեցանք Լիբանանի թէ՛ ախոյեանութիւնը եւ թէ՛ բաժակը: Այդ շրջանին տեղի կ'ունենային Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնաճիւղային խաղեր: 1946ին, խաղերը Հայկազի մէջ էին եւ ես ստիպւած Հայկազ պիտի երթայի խաղալու... իմ նախկին խումբի՝ Հայկազի Հ.Մ.Ը.Մ-ին դէմ: Ինծի համար շատ դժուար էր այս մէկը: Ի՞նչպէս կարելի էր խաղալ եղբայրներու դէմ, որոնք երկար տարիներ հետս սկառտներ, դասընկերներ եղած էին եւ միասին մինչեւ Ա. խումբ հասած էինք:

Զէի կրնար տրամաբանել այս կէտը: Մեծ մտահոգութեան մէջ էի եւ տխուր: Շատերը կը հարցնէին, թէ ի՞նչ ունիս Վազգէն: Ես չէի կրնար պատասխանել, միայն կ'ըսէի թէ քիչ մը անհանգիստ եմ:

Վերջապէս, որոշեցի երթալ եղբ. Շահինեանին մօտ՝ իրմէ խելք առնելու համար: Գացի եղբ. Շահինեանին քով եւ իրեն բացատրեցի կացութիւնս: Եղբ. Շահինեան ինծի պատասխանեց, որ տարբերութիւն չկայ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի եւ Հայկազի եղբայրներուն միջեւ: Ի՞նչ հարց թէ մենք կամ իրենք յաղթած



Եղբ. Վազգէն Հայկազի քաղաքապետարանի բաժակի աւարտական մրցումէն ետք, 1939ին:

են: Բոլորս ալ Հ.Մ.Ը.Մ-ականներ ենք: Մենք միջ-մասնաճիւղային խաղեր կը կազմակերպենք, որպէսզի երիտասարդները տեսնեն այս խաղերը եւ ապագային իրենք ալ կազմակերպեն: Ան ուրիշ շատ բաներ խօսեցաւ:

Յամենայնդէպս, ես այդ տարի մասնակցեցայ Հայկազի միջ-մասնաճիւղային խաղերուն: Պէյրութի վարչութիւնը ինծի նշանակեց խումբի խմբապետ: Հայկազի խումբին խմբապետն ալ եղբայրս՝ Արսէն Տէր Ղուկասեանն էր: Երբ երկու խումբերը դաշտ իջան, ժողովուրդին մէջ ծայր տուաւ պոռալ մը, թէ ի՞նչպէս երկու եղբայր իրարու դէմ կը խաղան:

Խաղին ընթացքին, քանի մը անգամ եղբորս հետ դէմ-դիմաց եկանք: Եղբայրս ուշադրութիւն կ'ընէր որ ինծի բան չըլլայ: Ան կամաց կը յարձակէր վրաս: Եթէ ուրիշ մէկը ըլլար, շատ զօրաւոր պիտի յարձակէր գնդակը առնելու համար: Անկեղծօրէն, ես այդ խաղէն որեւէ հաճոյք չառի: Կ'ուզէի որ ժամ առաջ խաղը աւարտէր: Եթէ ես Հայկազէն խաղացած ըլլայի մեծ հաճոյք պիտի առնէի, ոչ թէ յաղթանակին տիրացած ըլլալու համար, ո՛չ, քանի որ ինծի համար կարեւորը խաղալն էր եւ ոչ թէ յաղթանակը:

Լիբանանի եւ Սուրիոյ ազգային խումբերու Յ.Ս.Ը.Մ.ականները 1947ին: Ձախէն աջ՝ եղբայրներ Վազգէն Տէր Ղուկասեան, Արմէն Արզաբեան, Վարդիվառ Յովհաննէսեան, Եղիշէ Մանուկեան, Յակոբիկ ԱՓարեան եւ Համազասպ Արզումանեան:



ՀԱՒԵՊ ՔԱՂԱՔ... ՀԱՅ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Սամուէլ Մկրտիչեան ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Հալէպ քաղաք՝ հնադարեան օրերէն օրհնեալ քաղաք:

Ջարդարար թուրքին եաթաղանէն ճողոպրած, մէկ ու կէս միլիոն նահատակ տուած, տունն ու տեղը թալանուած հայ ժողովուրդին մնացորդացին համար Հալէպ քաղաքը դարձաւ հայ վէրքի, հայ տառապանքի բալասան, հիւրընկալութեան սպահով կայան:

Հալէպ քաղաք՝ բարութեան, ազնուութեան քաղաք, կարելի չէ քեզ մոռնալ: Քու ազնիւ, պայծառ երկնքիդ տակ, հայ որբերու ձեռքերով ու քրտինքով կառուցուած հայկաւանը կարծես հայ գաղթականութեան վիրաւոր սիրտն էր, կարծես Հայաստան աշխարհի սրբազան մէկ մասնիկն էր, զոր մարդիկ բերած կանգնած էին հոն՝ Հալէպ քաղաքի կողքին ու մկրտած փոքր Հայաստան:

Հոն՝ փոքր Հայաստանի մէջ, միայն հայ մարդ կ'ապրէր, միայն հայերէն կը խօսուէր, միայն հայ մարդ կը ծնէր: Ու հոն, ամէն օր կը վերլիչէին մէկ ու կէս միլիոն հայ նահատակներուն ջարդը: Ու հոն, ամէն օր կը վերլիչէին այն ազդը, որ կ'ազդարարէր՝ հայ մարդ, թրքերէն մի՛ խօսիր, յիչէ մէկ ու կէս միլիոն նահատակները:

Ու հոն՝ փոքր Հայաստանի մէջ, հայ մարդը իր հանապազօրեայ հացէն առաջ, հայ հոգիներուն մէջ հայ մշակոյթին արձանը վերականգնեց: Իսկ թափուած հայ քրտինքով հայ դպրոց, հայ եկեղեցի կառուցեց՝ եկող հայ մանուկներու հոգիին մէջ հայ գիր դրոշմելու, հայերէն աղօթելու համար:

Հալէպ քաղաք հոն՝ փոքր Հայաստանի մէջ, տեսլականի տէր տէրտէրն ու գաղափարական քուրմը, հայոց մէկ ու կէս միլիոն նահատակներու ճենճերող արիւնէն ծնած հայ սերունդները հայօրէն դարբնեցին, վրէժխնդրութեան բոցով մրրկեցին ու պարտականութիւն տուին՝ երթալ հայոց ջարդին մասին քարոզել համայն մարդկութեան:

Հալէպ քաղաք, եղբայրական սիրոյ քաղաք:

Տարին շատ հաւանաբար 1940 էր: Օրհնեալ Հալէպ քաղաքին կեդրոնական հրապարակին հնամեայ ժամացոյցը կարճ, բայց հաճելի եղանակ մը նուագեց եւ յետոյ ուժգնօրէն զարկաւ ժամը 4ին: Օրը անոյշ էր: Հրապարակը եռուզեռով լեցուն: Շուրջ բոլորը՝ ամէն քայլափոխիդ հայու ջերմիկ բարեւ մը կար: Աչքը ուր որ դառնար, որ խանութին ճակատին որ յարէր՝ պիտի կարդար հայու տաքուկ անուն մը, որ ազգային արդար հպարտանք կը ներշնչէր, ազգային ճրագին յոյս ու լոյս կու տար:

Նոյն պահուն, ես եւ բարեկամս՝ սասունցի Խրզոն, Յարու-





1940ական տարիներ. Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի ֆուսպոլի «ոսկեայ խումբ»ի անդամներ:

Թիւն Հոթոյեանը, երկուքս ալ մօտաւոր 19 տարիները շալակած, կը քալէինք հրապարակն ի վեր, դէպի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը՝ դէպի աղբիւրը լոյսի, որ այդ օրերուն դարձած էր օրհնեալ բազին: Դարձած էր ժողովատեղի, խմբագրատուն, ժամադրավայր, խորհրդատուն: Հոն էր հայ մտաւորականը, հայ բժիշկը, ճարտարագէտը: Հոն էր հայ գրողը, ուսուցիչը, խմբագիրը, համեստ հայ արհեստաւորը եւ ազգային հոգը շալակած կոմիտէն: Եւ ի մասնաւորի հոն էր հայ երիտասարդութիւնը իր երգ ու բերքով, ազգային տեսլականով, որ մեծ խոստում կը ներշնչէր: Նաեւ հոն էր Հ.Մ.Ը.Մ.ը իր բոլոր կազմերով: Հոն էր հայ ժողովուրդը իր հարուստով ու աղքատով:

Ու ամէն երեկոյ հաւատամքի բազինէն ներս ոտք դնելու տեղ չէր մնար: Ու ամէն երեկոյ նոր ուխտեալներ պիտի գային խնկարկելու խորանին խորհուրդին առջեւ: Ու ամէն երեկոյ այդքան մարդ, այդքան նուիրեալ պիտի գային իրարու տեսնելու, իրարու հետ զրուցելու, ժողով գումարելու ու, հայօրէն լիցքաւորուած,

տուն պիտի դառնային, վաղը երեկոյ վերստին գալու:

Աստուած իմ, հոգեկան այդ ինչ ուժ էր, գաղափարական այդ ինչ հաւատամք էր, որ այդքան մարդ կը մէկտեղէր, որ այդքան ուխտեալ կ'առաջնորդէր դէպի բազինը ուխտի, դէպի սրբազան նուիրում:

Նուիրական այդ օրերուն, որքան գեղեցիկ էր ծառայել հայ ազգին, որքան հոգեպարար էր սպասարկել գաղափարի, որքան նուիրական էր տքնիլ, յոգնիլ հայակերտումի սրբազան աշխատանքի:

Հոս, հարկ կը զգամ նշել Հայկաի քաղաքին գաղափարական ղեկավարութեան համեստութիւնը, ազնուութիւնն ու խոհեմութիւնը, եւ ի մասնաւորի նուիրումը, որ մեծ դեր ունեցաւ հայ ժողովուրդը դէպի հայութիւն առաջնորդելու, հայ ժողովուրդը դէպի գաղափար ներգրաւելու, հայ ժողովուրդը դէպի իր արմատները հունաւորելու աշխատանքին մէջ: Փառք ու պատիւ այն բոլոր նուիրեալներուն - տոքթ. Ա. Գապագեանին, Հրաչ Փափագեանին, տոքթ. Յակոբ Գասապեանին, Միհրան Հերարդեանին, Նշան Թիւլիսիզեանին, Լուտեր Մասպանաճեանին- որոնք շատ բան տուին, որոնք անսակարկ զոհուեցան իրենց ազգին, իրենց գաղափարին համար:

Ազգային յաջողութեան այդ օրերուն, Սուրբոյ տարածքին եւ առաւելաբար Թրքական սահմանին ամբողջ երկայնքին, Թեքէօղայէն մինչեւ Ազգ-Աֆրին, մինչեւ Քեսապ՝ ցանցընւած ամէն գիւղ ու գիւղաքաղաք Հ.Մ.Ը.Մ.ական ջերմիկ շրջանակ մը ունէր իբրեւ տուն-տեղ, իբրեւ դպրոց թէ սրբավայր: Ու առաւելաբար Հ.Մ.Ը.Մ.ն էր, որ ջարդուած, հալածուած, տուն-տեղ կորսնցուցած հայ ժողովուրդի մնացորդացին հաւատք ներշնչեց, հայ արեան եռք տուաւ, հայը հայուն ծանօթացուց, «եղբայր» կոչեց, հայացուց:

Հայկաի քաղաք՝ օրհնեալ քաղաք:

Հայ երգի, բերքի այդ օրերուն, այդ ինչ ժրաջան աշխատանք էր՝ հայուն վիրաւոր եսը վերականգնելու: Այդ ինչ ճարտար խօսք էր՝ հայուն արժանապատուութիւնը բարձրացնելու: Մարդկային այդ ինչ մեծ եռք ու զոհողութիւն էր հայուն փրած սիրտը աշխուժացնելու: Հայ ժողովուրդը ինքն էր՝ որ իր բոլոր զաւակներով անխտիր կ'արարէր: Կ'արարէր՝



Հայկաի միջ-մասնաճիւղային միջոցներու մէկուն դադարին: Նստած, ձախէն աջ երկայնքով Յակոբ Գասեան, Վարուժան Երեցեան, Արսէն Տէր Ղուկասեան եւ Մանուկ Յովհաննէսեան:

քարը-քարին, կ'արարէր՝ միտք ու շնորհ ու կը կոչէր՝ ա'խ Հայաստան, քեզի համար...:

Հայ կեանքի վերականգնումի այդ օրերուն այդ ինչ մեծ դէպք էր, այդ ինչ մեծ սխրանք էր, որ հայ մարդը կ'արարէր ծոցիդ մէջ Հալէպ քաղաք, ու դուն կը դիտէիր ուրախ-ուրախ:

Այդ օրերուն, արհեստներու թէ արուեստներու, բժշկութեան թէ գիտութեան, ճարտարարուեստի, մարզական թէ կառուցողական մարզերու մէջ, այդ ինչ մեծ յաջողութիւններու կ'արժանանար հայ մարդը: Այդքան փառք ու այդքան պատիւ քեզի համար էր Հայաստան:

Հալէպ քաղաք, սիրելի քաղաք:

Ու ես տեսայ, որ հայ կեանքի բոլոր բեմերուն վրայ, հայ երգն ու հայ վէրքը՝ Միամանթոյին «Ափ մը մոխիր»ը, Դանիէլ Վարուժանին «Դերենիկ»ը, Ծառուկեանին «Հէ'յ ջան Երեւան»ը, հայ տղուն երկաթեայ շրթներուն վրայ դարձան մրրկող կարօտ ու շրջեցան աւերակ Հայաստանի երկնակամարին վրայ, դարձան բոցեղէն շունչ ու մտան Սասուն, առին «Թուր կեծակին» ու հէ'յ ջան Երեւան կանչելով մտան Հայաստան:

Ու ես տեսայ, որ Սահակեան դպրոցին տնօրէնը՝ պրն. Եդարը Տաննապետեան, հարց կու տար երկրորդ դասարանի պատմութեան աշակերտին.

-Տղաս, Մանուկ, ո՞վ է աշխարհի ամէնէն քաջ մարդը:

Ու պատասխանը կ'ըլլար ուժգին պոռթկում մը.

-Պարո՛ն, աշխարհի ամէնէն քաջ մարդը Հայկ նահապետն է, եւ ես անոր թոռն եմ:

Այդ ինչ խրախուսիչ պատասխան էր: Այդ ինչ ինքնավրատահ, խիզախ վճիռ էր: Պրն. տնօրէնը հիացած ստացած պատասխանէն, լուռ կը քալէր դէպի աշակերտը, կը համբուրէր անոր ճակատէն ու կ'ըսէր.

-Ապրիս տղաս, դուն մեծ մարդ պիտի դառնաս:

Մինչ հոն՝ Ֆուլթոյի դաշտերուն վրայ հայկական խումբերու գրոհները, Վազգէնին թռիչքը, Արմէնին տրիպլը, Համոյին կողը, Հ.Մ.Ը.Մ.ի յաջողական յաղթանակները՝ փառք ու պատիւ էին, ուրախութիւն, հազար-հազար կանչ ու հազար-հազար ծափ էին, որոնք հայուն մէջ հայ մարդը կ'արարէին:

Հալէպ քաղաք՝ ազնուութեան համեստութեան քաղաք:

Մինչ այս բոլորին դափնեպսակը նկատուող Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան խաղերուն տողանցքը, որ աւելի քան 25 հազար մարդ կը մէկտեղէր, իր սկառուտական շքեղ շարքերուն՝ արի-արեւոյշներուն առնական քալուածքով, գրաւիչ կերպարանքով ու խրոխտ նայուածքով՝ այդքան մարդ կը հմայէր, այդքան մարդ կը հրապուրէր:

Ու ես, այդքան մարդու աչքերուն մէջ տեսայ հայ ու Հայաստան:


The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

STUDIOVICKER 2005 PARIS



Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՊՐՈՒՄ Է

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ՀԱԻԱՏԱԻՈՐ
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ՎԱՐՈՒԺԱՆ ՇԱՄԼԵԱՆ

Երբ. Վարուժան, ձեր անունը անմիջականորեն կապված է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի ԼԵՎԱՄի խաղերուն: Ի՞նչպէս կը բացատրէք այս երեւոյթը:

-Ես թէեւ երեք շրջան մասնաճիւղի վարչական եղած եմ, իսկ երեք շրջան ալ՝ 6 տարի Շրջանային Վարչութեան անդամ, սակայն, մարդիկ զիս ամէնէն աւելի կը յիշեն ԼԵՎԱՄի խաղերով, պարզապէս որովհետեւ 20 տարի գործած եմ հոն: Հ.Մ.Ը.Մ.էն ներս մուտքս նոյնիսկ եղած է ԼԵՎԱՄի ճամբով:

Սկսուտ կամ մարզիկ չէ՞ք եղած:

-Ո՛չ: 1969ին, երբ ԼԵՎԱՄը նոր ընթացք կ'առնէր Լիբանանի մէջ: Գիտէ՞ք, որ ԼԵՎԱՄը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի նախաձեռնութիւն, սկսած է 1966ին, սակայն 1968ին այդ աշխատանքը փոխանցուած է Լիբանանի Շրջանային Վարչութեան: Ուրեմն, 1969ին, երբ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ ճամբայ ելան այս խաղերը, դիմեցին նաեւ ինձի, իբրեւ դեղագործ, խնամող: Ես ընդառաջեցի ինձի ներկայացուած առաջարկին եւ անմիջապէս գործի լծուեցայ:



1984. ԼԵՎԱՄի յանձնախումբի անդամներ մրցանակակիր մարզիկներու հետ:

Որո՞նք կը յիշէք ԼԵՎԱՄԻ այդ օրերու պատասխանատուներէն:

-Մտերմ ընկերս, դասընկերս՝ Բիւզանդ Թորիկեանը, Ալէքս Պէգիկեանը, Վարուժան Մուրատեանը եւ Վարդգէս Էսկիւպաշեանը:

ԼԵՎԱՄը ի՞նչ օգտակարութիւն ունեցած է ըստ ձեզի:

-ԼԵՎԱՄին հիմնական նպատակը եղած է դպրոցներէն հաւաքել Հ.Մ.Ը.Մ-ի մարզական խումբերուն ատարղծը: ԼԵՎԱՄը նպատակադրած է նաեւ այլազան վարժարաններու աշակերտները քով-քովի բերել եւ եղբայրական մրցակցութեան մղել:

Աշխատանքը բաւական ծանր էր, որովհետեւ պէտք էր կապուիլ դպրոցներու տնօրէններուն, առնել անոնց հաւանութիւնը, երբեմն նոյնիսկ մարզական տարազ (գոնէ շապիկներ) տրամադրել կարգ մը խումբերուն, յայտագիր պատրաստել եւ հետեւիլ անոր կանոնաւոր գործադրութեան: Սկզբնական շրջանին այս բոլորը դիւրին էին, բայց երբ լիբանանեան պատերազմը սկսաւ, 1975էն ետք մտահոգութիւնները եւ դժուարութիւնները բազմացան:

Մեր հիմնական մտահոգութիւններէն մէկը այն էր, որ տղաքը գէնքի չէր թան, մնան մարզական-սկառուտական միջնորդութի մէջ: Զէնքը ամէն մարդու սրտին կը խօսի, մանաւանդ երբ ինքնապաշտպանութեան համար կ'օգտագործուի: Մենք կը մտահոգուէինք, որ մեր տղաքը մեզմէ չհեռանան:

20 տարին քիչ ժամանակ չէ: Ես 20 տարի գործեցի ԼԵՎԱՄի մէջ, իբրեւ դեղագործ-խնամող, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եւ ատեն մըն ալ իբրեւ յանձնախումբին անպաշտօն գործավար: 1989ին երբ Գանատա փոխադրուեցայ, գործս յանձնեցի հաւատաւոր այլ եղբայրներու՝ Վարուժան Գէորգեանին, Գէորգ Գարապոյաճեանին եւ ուրիշներու, որոնք իրենց կարգին աշխատանքը շարունակեցին լաւ թափով:

Որո՞նք կը յիշէք ձեր գործակիցներէն:

-Սկիզբը գործեցի երիտասարդներու հետ: Կը յիշեմ՝ Յովիկ Խուստիկեանը կար, «Տոթօ Մանուկ»ին տղան կար: Կային նաեւ ուրիշներ: Աւելի ուշ, յանձնախումբին մէջ գործեցին Գէորգ Թաշճեանը (յանձնախումբին ատենապետն էր), Անթուան Գազէգեանը, Իշխան Աթմաճեանը, Երուանդ Էթիէմէզեանը, քոյր մըն ալ կար Սեզա անունով:

Պարտք կը զգամ յիշել նաեւ երկու անուն: Առաջինը՝ «Թատրազան»ը, եղբ. Յակոբ Քահճէճեանը, որ ԼԵՎԱՄի աշխատանքներուն «անձանօթ գինուոր»ն էր: Մեր «սեւ աշխատանք»ին 50 առ հարիւրը ինքը կը կատարէր: Ամէն տեղ կը վազէր: Բոլորին կը հասնէր: Երկրորդ անունը, «Ազգակ»ի այդ օրերու խմբագիրն էր՝ եղբ. Սարգիս Մահճէճեանը, որ ԼԵՎԱՄի առաքելութեան ջերմ հաւատացող մըն էր: Ամէն Կիրակի, ԼԵՎԱՄի արդիւնքները իրեն կը հասցնէինք եւ ինք մարզական բաժինին մէջ տեղ կը պահէր, երբեմն նոյնիսկ նիւթեր դուրս կը ձգէր, որպէսզի Երկուշաբթի առտու ԼԵՎԱՄի արդիւնքները անպայման լոյս տեսնէին թերթին մէջ:

ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ԱՆԴԱՄԱՔԱՐՏ



Եղբ. Վարուժան Շամլեան ծնած է 1934ին, Ալեքսանդրէթ: Հագի հինգ տարեկան, ծնողքին հետ կը փոխադրուի Պէյրութ, Լիբանան: Նախ կը յաճախէ Համազգայինի Հայ Գեմարանը, իսկ ապա՝ Ֆրանսական լիսէ: Այնուհետեւ, ան կ'աւարտէ Ֆրանսական Սէն Ժոզէֆ համալսարանը, դեղագործութեան մասնագիտութեամբ:

Շրջան մը եղբ. Վարուժան կը դասաւանդէ իր աւարտած համալսարանին մէջ, ապա ամբողջութեամբ կը նուիրուի իր մասնագիտութեան՝ դեղագործութեան: 1969ին, ԼԵՎԱՄի (Լիբանանահայ Երկրորդական Վարժարաններու Աշակերտական Մարզախաղերու) սկզբնաւորման հետ, ան իր օժանդակութիւնը կը բերէ օրուան պատասխանատուներուն, իբրեւ խնամատար-դեղագործ:

1972ին, եղբ. Վարուժան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի վարչական, ատենադրպիրի պաշտօնով: 1973ին եւ 1974ին ան կը վարէ մասնաճիւղին ատենապետութիւնը: 1975ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ: Երկու տարի ետք ան դարձեալ կը վերընտրուի: Երրորդ շրջան մը ան Շրջանային Վարչութեան մաս կը կազմէ 1983-1985:

Այս միջոցին, եղբ. Վարուժան իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի Ա. (1974), Գ. (1983) եւ Դ. (1987) Պատգամաւորական ժողովներուն:

Եղբ. Վարուժան Շամլեանին անունը առաւելաբար կապուած է ԼԵՎԱՄի, որովհետեւ 1969էն մինչեւ Գանատա մեկնումը՝ 1989, իբրեւ խնամատար, Շրջանային Վարչութեան անդամ թէ յանձնախումբի պատասխանատու, ան 20 տարի իր մեծ նպաստը բերած է լիբանանահայ աշակերտութիւնը մարմնակրթութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ին կապող այս կարեւոր նախաձեռնութեան յաջողութիւններուն:

1989էն ի վեր եղբ. Վարուժան հաստատուած է Մոնթրէալ, Գանատա: Ամուսնացած է եւ ունի չորս զաւակ:

Դուք նաեւ վարչական աշխատանքներ ստանձնած էք: Ի՞նչ կրնաք ըսել այդ մասին:

-Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղը հազիւ երկու տարեկան կեանք ունէր, երբ 1972ին ես վարչական ընտրուեցայ, ատենադրպիրի պաշտօնով: Յետոյ երկու տարի՝ 1973ին եւ 1974ին դարձայ մասնաճիւղին ատենապետը: Վարչական եղբայրներէն կը յիշեմ նախկին Փոլիպոլիստ, ինծի համար չափէն աւելի յարգելի եղբ. Յովհաննէս Թերզեանը, եղբայրներ

Սարգիս Փանոսեանը, Անդրանիկ Պէօյուքեանը, Պետիկ Սապունճեանը եւ ուրիշներ:

1975-1979 երկու շրջան եղած եմ Շրջանային Վարչութեան ատենադպիր, իսկ 1983-1985՝ Շրջանային Վարչութեան գանձապահ: Միջանկեալ, երկու տարի ալ գործած եմ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի մէջ:

ԼԵՎԱՍԷՆ բացի, մարզական կեանքին հետ որեւէ առնչութիւն ունեցած էք:

-Գլուխէս քիչ մը ամէն ինչ անցած է: Սակայն մարզական կեանքին մէջ չեմ մտած, որովհետեւ չեմ մոռցած եղբ. Բիւզանդ Թորիկեանին մէկ խօսքը՝ «Եթէ կ'ուզես Հ.Մ.Ը.Մ-ին երկար ծառայել, ֆուլթայոյն հեռու կեցիր: Ֆուլթայոյլը մարդ կ'այրէ»: Այս չի նշանակեր թէ օգտակար չեմ դարձած մեր մարզիկներուն եւ ֆուլթայոյլատներուն յատկապէս: Դեղարանս միշտ եղած է բոլորին տրամադրութեան տակ: Ով որ ինամքի մը պէտք ունեցած է դիմած է ինծի եւ ես սիրով ընդառաջած եմ բոլորին:

Իսկ ո՞ր է այսօր եղբ. Վարուժանը:

-1989ին Մոնթրէլ պոխադրուելէս ետք, գործի պայմաններուս բերումով միութենական աշխատանք չտարի, սակայն հոգևոր-արտով մնացի Հ.Մ.Ը.Մ-ական: Հ.Մ.Ը.Մ-ը արեանս մէջն է: Հ.Մ.Ը.Մ-ը ապրում է... [կ'արտասուէ - «Մ.»]:

Այդ ապրումը ի՞նչպէս կարելի է ունենալ այսօր:

-Այն գաղութներուն մէջ ուր շատ հայութիւն կայ եւ ըսիրտաւ չկայ՝ այդ ապրումը կարելի է ունենալ, բայց ինչ որ արձագանգներ կը լսեմ, մեր օրերուն նման ապրում ունենալ քիչ մը դժուար կը թուի: Թերեւս մեր պարտականութիւններէն մէկն էր մեր յաջորդները պատրաստել: Մենք բան չզլացանք, մեզի յաջորդներ պատրաստեցինք, բայց ժամանակը այնպէս մը ըրաւ, որ երիտասարդները ցրուեցան, մենք ցրուեցանք: Օրերը եւ պայմանները փոխուեցան:

Միութենական ապրում եւ տագնապ հետզհետ կը պակսին մեր օրերուն: Ստիպուած կը դիմենք անցաւի: Ի՞նչ կրնաք պատմել անցաւի ձեր յիշատակներէն, ապրումներէն:

-Երկու բան երբեք չեմ կրնար մոռնալ: Առաջինը, Հ.Մ.Ը.Մ-ի արիւններուն փրկութիւնն է: Լիբանանի դէպքերուն սկիզբն էր: Հ.Մ.Ը.Մ-ի արիւնները Պէյրութի ակումբին մէջ կը գտնուէին: Այդ օրերուն Պէյրութի արեւելեան շրջանէն արեւմտեան շրջան անցնելը խենթութիւն էր, վտանգաւոր էր: Միւս կողմէ ալ միութեան արիւնները կարելի չէր այդպէս ձգել: Ի՞նչ ընել-ի՞նչ չընել: Գտա՛նք լուծումը: Ինքնաշարժին մէջ նստանք ես, կինս, պզտիկները, եղբ. Բիւզանդը եւ



1985. Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի նախագահը Յ.Ս.Ը.Մ-ին տուած այցելութեան ընթացքին: Եղբ. Շամլեան, ոտքի՝ ձախէն երկրորդը:

կինը, ու իբրեւ մէկ մեծ ընտանիք, դժուարութեամբ անցանք «սահմանը», արիւնները կարողացանք ազատել եւ արեւելեան ապահով շրջան փոխադրել: Տարիներով այդ արիւնները մնացին տանս կարածը, մինչեւ որ օրին մէկը փոխանցուեցան միութեան պատասխանատուներուն:

Յիշողութենէս անջնջելի է նաեւ երկրորդ դէպք մը: Հ.Մ.Ը.Մ-ի 70ամեակին, 1988ին, Հայէպի տղոց պասքեթպոլի խումբը հրաւիրուած էր Պէյրութ, մրցաշարքի մը մասնակցելու համար: Աւարտական խաղն էր, Սոֆիա Յակոբեան Գոլէճի դաշտին վրայ: Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ ընդդէմ Հ.Մ.Ը.Մ. Հալէպ: Իրապէս բարձր մակարդակի խաղ էր, լարուած մթնոլորտ կար, շունչ չէինք կրնար առնել: Ի վերջոյ խաղը աւարտեցաւ 70-70 արդիւնքով: Պասքեթպոլի խաղ մը սակայն հաւասար չի վերջանար: Պատասխանատուները անցան ներս՝ որոշելու համար թէ երկարաձգումը ի՞նչպէս պիտի ըլլայ: Զիս ալ հրաւիրեցին: Ես ըսի՝ գացէ՛ք, ի՞նչ կ'ուզէք որոշեցէք, ձգեցէք որ ես այս մթնոլորտով ապրիմ: 5-10 վայրկեան ետք, երբ տակաւին պատասխանատուները չէին կրցած որոշել, թէ մրցումին ելքը ի՞նչպէս պիտի վճռուի, մօտս նստող պզտիկ մը ընկերոջը ըսաւ. «Ակա լան ճայիր, 70ամեակ է ես, 70-70 վերջացաւ»: Կա՛յծն էր: Վագեցի՛ ներս եւ ըսի, որ 70ամեակ է, 70-70, մէկական բաժակ կու տաք, կը վերջանայ: Ո՛ւր էիր մինչեւ հիմա, ըսին: Պզտիկները եթէ չըլլային, տակաւին հոս հասած չէի ըլլար, պատասխանեցի ես:

Կը կարծէ՞ք, որ այս ապրումը մինչեւ վերջ պիտի մնայ ձեր մէջ:

-Կասկած չունիմ: Գիտէ՞ք, ես այս դրօշն [ցոյց կու տայ Յ.Ս.Ը.Մ-ի դրօշը - «Մ.»] անձնապէս հատ մը գնած եմ եւ ըսած եմ [արտասուելով - «Մ.»]՝ ասո՛վ պիտի թաղէք զիս...

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՎԷՊԻ ՇԵՓՈՐԱԽՈՒՄԲԸ ԱՆՑԵԱԼԷՆ ԱՅՍՕՐ



Սագո Գասարձեան ՀԱԼԷՊ

հր ծնունդէն ի վեր, Հ.Մ.Ը.Մ. Սփիւռքի մէջ կարեւոր անուն ունի իր բեղուն գործունէութեամբ: Ան ներկայ է հոն, ուր համախմբուած հայեր կան, աշխարհի չորս դին:

Մեծ է Հ.Մ.Ը.Մ.ը իր խորհմաստ նշանաբանով՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»-ով: Այդ պատգամը պարզ լոգունգ մը չէ, այլ՝ յառաջդիմութեան եւ յաղթանակի մղող ազդակ մըն է: Մեծ է Հ.Մ.Ը.Մ.ը, որովհետեւ ան սովորական մարզական միութիւն մը չէ: Անոր անուան երրորդ տառը՝ «Ը.»ը կու գայ ապացուցելու, թէ Հ.Մ.Ը.Մ.ը հաւատքի, լոյսի ու անշեղ նպատակի անմար հնոց մըն է հայ ազգի զաւակներուն համար, առանց դաւանանքի խտրութեան:

Անհնար է հոս յիշել Հ.Մ.Ը.Մ.ի 90 տարիներու վաստակաշատ ծառայութիւնը հայ ազգին:

Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղը հիմնուած օրէն ամուր կառչելով հալէպահայ գաղութի ազգային ու քաղաքացիական իր բոլոր պարտականութիւններուն, դարձած է այն կայանը, ուր կանգ կ'առնէ ամէն անձ, որ կ'ուզէ գրի առնել գաղութին պատմութիւնը:

Մեկնելով այս համոզումէն, պիտի փորձենք հալէպահայ գաղութի գործունէութեան մէջ նշանակալից դեր ունեցող, բայց ընդհանրապէս ժամանակագրութիւններու եւ պատմագրութիւններու էջերէն դուրս մնացած Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին պատմութեան մասին լոյսի շող մը արծակել, յուսալով որ ան կ'արժանանայ մասնագէտ պատմագիրներու հետաքրքրութեան:

1930ական թուականներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղին մարզական եւ սկաուտական խումբերու աշխատանքին թափ տալու նպատակով կը հիմնուի փոքր ու թմբուկ նուագող այս խումբը, որուն արդիւնքը կը մնայ սահմանափակ՝ քիչ թիւով անդամներ ու միատեսակ գործիքներ ունենալուն պատճառով:

1944-1945 թուականին, եղբ. Յովհաննէս Խաչատուրեանի խմբապետութեամբ, կ'որոշուի փոքրաթիւ այս նուագախումբը վերածել մեծ շեփորախումբի: Խումբը ղեկավարելու գործը կը յանձնուի եղբ. Յակոբ Քէչիչեանին, որ մինչ այդ մաս կը կազմէր շրջանի Ֆրանսական զինուորական նուագախումբին ու, իբրեւ լաւ փողահար եւ թմբկահար, արժանացած էր բազմաթիւ գնահատանքներու:

Այդ օրերուն շեփորախումբը կը բաղկանար Նոր Գիւղի եւ քաղաքի մասնաճիւղերու սկաուտ եղբայրներէ, որոնք յառաջիկային միաւոր մը կազմելով կը մասնակցին սկաուտական գործունէութիւններու:

Եղբ. Յովհաննէս Խաչատուրեան մեծ ներդրում կ'ունենայ այս նուագախումբին ստեղծման մէջ: Ան կը դառնայ շեփորախումբին առաջին ատենապետը:

1949ին, եղբ. Յովհաննէս Խաչատուրեան կը հրաժարի ատենապետութենէ, իր պաշտօնը յանձնելով Եղբ. Աւետիս Նազարեանին, որ դարձեալ կը հրաժարի՝ Իտալիա մեկնումին պատճառով (երաժշտական ուսումը շարունակելու համար):

1953ին, շեփորախումբին ատենապետութիւնը կը ստանձնէ եղբ. Յովհաննէս Արապաճեան եւ կը շարունակէ մինչեւ 1963:

Վերոյիշեալ ժամանակամիջոցին (1944-1963), Հ.Մ.Ը.Մ.ի

չեփորախումբը իր մասնակցութիւնը կը բերէ միջ-մասնաճիւղային բոլոր մրցաշարքերու բացման եւ փակման հանդիսութիւններուն: Իր բեղուն գործունէութեան շնորհիւ ան կ'արժանանայ նաեւ Սուրիոյ օրուան իշխանութիւններու զնահատանքին:

1963ին, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի շեփորախումբին գործունէութիւնը կը դադարի քաղաքական պատճառներով, սակայն ան կը շարունակէ իր սկաուտական գործունէութիւնը:

Այս վիճակը կը շարունակուի մինչեւ 1979, երբ նախկին նուագողներէ կազմուած խումբ մը սկաուտ եղբայրներ քով-քովի գալով կ'որոշեն վերակենդանացնել 16 տարի գործունէութենէ դադարած շեփորախումբը: Այս խումբին անդամներն էին.- եղբայրներ Յովհաննէս Արապաճեան՝ ատենապետ, Գօգօ Պատիկեան, Փիէր եւ Սեդրակ Քիրոյեաններ, Խաչիկ Գաբրիէլեան եւ ուրիշներ: Խումբին ուսուցչութեան գործը կը յանձնուի նախկին ուսուցիչ եղբ. Յակոբ Քէչիշեանին եւ անոր կողքին եղբ. Տիգրան Ժամկոչեանին, նկատի ունենալով եղբ. Յակոբին տարիքը եւ եղբ. Տիգրանին Սուրիոյ երաժշտական ասպարէզի մէջ ունեցած մեծ վաստակը:

«Սկզբնական շրջանին մեծ դժուարութիւններու հանդիպեցանք. կ'ըսէ եղբ. Յովհաննէս Արապաճեան, դժուարութիւններէն մեծագոյնն էր նիւթականի եւ գործիքներու չզոյուրութիւնը: Սակայն այդ դժուարութիւնները կարողացանք յաղթահարել՝ շնորհիւ օրուան Սկաուտ. Խորհուրդի քաջալերանքին եւ կարգ մը օժանդակող անձերու, որոնք կը շարունակէն սատարել շեփորախումբին»:

25 անդամներէ բաղկացած Հ.Մ.Ը.Մ.ի վերակազմեալ սկաուտական շեփորախումբը կարճ ժամանակամիջոցի ընթացքին թիւի աճ կ'արձանագրէ, շնորհիւ խումբի անդամներու ճիգերուն եւ անոնց զաւակներուն մասնակցութեան՝ փորձերուն եւ սողանքներուն:

Այսպէսով, երկար տարիներ ետք,




Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի շեփորախումբը 1948ին:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շեփորախումբը 17 Ապրիլ 1980ին կ'ունենայ միջ-մասնաճիւղային մրցումներու իր առաջին տողանցքը: Շուտով նուագախումբի անդամներուն թիւը կը հասնի 125ի:

1983ին, Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը կ'ունենայ 35 անդամներէ բաղկացած արծուիկ քոյրերու նուագախումբ մը, որ իր մասնակցութիւնը կը բերէ 1983ի միջ-մասնաճիւղային խաղերուն, իբր անջատ շեփորախումբ: Այս խումբը կը հանդիսանայ եղբ. Յակոբի եւ եղբ. Տիգրանի գործակցութեան վերջին հունձքը: Եղբ. Յակոբ յառաջացեալ իր տարիքին պատճառով կը հեռանայ շեփորախումբի ուսուցչութենէն եւ գործը կը յանձնուի եղբ. Տիգրան Ժամկոչեանին:

1984ին, անձնական պատճառներով եղբ. Յովհաննէս Արապաճեան ատենապետութիւնը կը յանձնէ եղբ. Խաչիկ Գաբրիէլեանին, որ կը ճանչցրելի իր խստապահանջութեամբ:

Եղբ. Խաչիկ Գաբրիէլեանի ատենապետութիւնը կը շարունակուի մինչեւ 1989, ապա ան պաշտօնը վերստին կը յանձնէ եղբ. Յովհաննէս Արապաճեանին, որ իր կարգին 5 տարի ծառայելէ ետք՝ 1994ին զայն կը յանձնէ եղբ. Գօգօ Պատիկեանին: Տքնաջան աշխատանքով ու բարձր գիտութեամբ, եղբ. Գօգօ Պատիկեան կը շարունակէ պահել շեփորախումբին բարձր մակարդակը ազգային եւ պետական բեմերու վրայ մինչեւ 2000



Շեփորախումբի երկար տարիներու ուսուցիչ եղբ. Տիգրան Ժամկոչեան, 8 Ապրիլ 1985ին, Հալէպ, տողանցքէն առաջ:

թուական, երբ իրեն կը յաջորդէ եղբ. Միհրան Կարապետեան: Եղբ. Միհրանին ատենապետութեան երկու տարւան շրջանը կը յիշուի իբրեւ կազմակերպչական եռուն աշխատանքի շրջան: Եղբ. Միհրան Կարապետեանի կը յաջորդէ Եղբ. Հրաչ Ղազարեան, որ կը նկատուի շեփորախումբին ամէնէն երիտասարդ ատենապետը: Գործը աւելի արդիւնաւէտ է, երբ հիներու հմուտ փորձառութեան կը միանայ երիտասարդ ատենապետ մը, յանձինն եղբ. Խորէն Արապաճեանի:



խումբի շղթային վերջին օղակը կը բաղկանայ երեսունհինգ նուազող քոյր-եղբայրներէ, որոնք ճիգ չեն խնայեր նախորդներու նման բարձր պահելու իրենց վստահած անմառ ջահը: Անոնց շեփորներուն եւ թմբուկներուն ձայները կու գան պատմելու գաղութին ուրախ եւ տխուր առիթները:

Նորածիլ սերունդ մը կը պատրաստուի միանալու այդ ջահակիրներուն:

Տարիները կը յաջորդեն իրարու եւ կեանքը կը շարունակուի: Հակառակ կեանքի վերիվայրումներուն, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը կը շարունակէ իր խաղաղ ընթացքը, գիտակցելով թէ շեփորախումբին պատմութիւնը կը կազմուի օղակներով հիւսուած շղթայէ մը, եւ ամէն անգամ կու գայ նոր օղակ մը աւելնալու այդ շղթային վրայ: Այսօր, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորա-

րուն: Քառասուն փոքր քոյր-եղբայրներէ բաղկացած խումբ մը, Հ.Մ.Ը.Մ-ականի գիտակցութեամբ զինուած եւ շեփորախումբի տիպար անդամի յատկութիւններով օժտուած:

Շեփորախումբի յանձնախումբը կը բաղկանայ 9 քոյր-եղբայրներէ: Ան կը վայելէ Հ.Մ.Ը.Մ-ի տեղական վարչութեան ամբողջական հովանաւորութիւնն ու նիւթաբարոյական օժանդակութիւնը, ինչպէս նաեւ մեծ թիւով համակիրներու եւ նուիրատուներու աջակցութիւնը:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand / Terre vue du Ciel. Licence 075-960031. Studio / CERN, 2005 H&P

11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com	

64 ՏԱՐԻ ԱՌԱՋ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԾԻՂ ՊԱԱԼՊԵՔԻ ՄԷՋ

ՈԳԵԻՈՐ ՇԱՐԺՈՒՄ ՊԱԱԼՊԵՔԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի շրջանի պատմության վերաբերող ուշագրաւ ակնարկ մըն է ստորեւ տրուած գրութիւնը, որ պատահմամբ յայտնաբերուած է լիբանանահայ մամուլի արխիւներէն («Ազդարար», 26 Օգոստոս 1944):


Գրութիւնը կ'անդրադառնայ պատմական Պաալպէք քաղաքին մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի մասնաճիւղի մը գոյութեան: Շատ հաւանաբար, յիշեալ մասնաճիւղը կարծատեւ կեանք մը ունեցած ըլլայ, այնուամենայնիւ, անոր ստեղծման փաստն իսկ հետաքրքրական է:

Պաալպէքէն կը գրեն մեզի.- «Ազդարար»ի ընթերցողներուն թերեւս ծանօթ է գաղութին փոթորկոտ կեանքը: Բայց այս մասին պիտի չգրեմ, ատոր մեղքը թողելով ազգային վերին մարմնին վրայ, որ գիտակցաբար այս վիճակին հասցուց գործերը: Ոչ, ուրախալի երեւոյթ մըն է որ պիտի պարզեմ:

Չորս տարուան երկար անտարբերութենէ մը վերջ, մեր երիտասարդները գեղեցիկ գաղափարն ունեցան քով-քովի գալու եւ մարզական միութիւն մը կազմելու Հ.Մ.Ը.Մ. անուան տակ: Միաժամանակ վարչութիւն մըն ալ կազմուեցաւ հետեւեալ երիտասարդներէն.- Յ. Քէլլէճեան՝ ատենապետ, Գ. Պաղչէճեան ատենադպիր, Հ. Չամուրեան՝ գանձապահ, Յ. Մարտիրոսեան եւ Յ. Սէմէրճեան՝ խորհրդական:

Նորակազմ վարչութեան առաջին գործն եղաւ սկստակական ճիւղ մը ունենալ, ամէն զոհողութիւն աչք առնելով: Եւ սկսաւ տղաքը մարզել այս ուղղութեամբ, բայց կը պակսէին անհրաժեշտ կազմաձեւերը, որոնց համար պէտք կար մօտ 500 ոսկիի: Ի՞նչ հոգ, սակայն, երբ ասդին կայ հայուն զոհաբերութեան ոգին: Ազնիւ հայրենակից մը՝ պրն. Կարպիս Ապաճեան, որ իբրեւ հիւր կը գտնուի հոս, տեսնելով մեր տղոց ոգեւոր շարժումը, յանձնառու եղաւ այդ գումարին մէկ մասը հայթայթելու, յառաջիկային ետ ստանալու պայմանով: Այսքանը բաւարար էր արդէն երիտասարդութիւնը քաջալերելու: Եւ կարճ ատենէն արդէն պատրաստ էին բոլոր կազմաձեւերը:

Վարչութիւնը միւս կողմէ պէտք տեսաւ տեղական սկստակական միութեան իմացնելու իր այս ձեռնարկը, եւ անմիջապէս ստացաւ եղբայրական պատասխան



ԳԵՂԱՐՈՒԵՍ

մը, այնքան ջերմ ու քաջալերական: Միաժամանակ մեր տղաքը կը հրաւիրուէին մասնակցելու Կիրակի օր տեղի ունենալիք տղանցքի մը: Աւելորդ է ըսել թէ մեր սկաուտները սիրով մասնակցեցան տողանցքին, որ շատ սիրալիր մթնոլորտ մը ստեղծեց, շատերու նախանձը գրգռելու աստիճան:

Շաբաթ մը չանցած, ահա երկրորդ հրաւէր մը մասնակցելու մեծ հանդէսի մը, սարքուած ի յիշատակ Հիւսէյն թագաւորի: Յուլիս 30ին, մեր արիները կ'առաջնան դէպի ժամադրավայրը, պարզած Լիբանանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշները, եւ պատիւով կ'ընդունուին: Ապա սկաուտական ընդհանուր թափօրը առաջ կը շարժի դէպի կառավարչատունը, նուագախումբի առաջնորդութեամբ: Տպաւորիչ էր տեսարանը: Միօրինակ զգեստով 500է աւելի սկաուտներ, որոնց մէջ բժիշկներ եւ յայտնի վաճառականներ: Երկրորդ շարքի վրայ կու գային Հ.Մ.Ը.Մ.ի 40 արիները, գլխաւորութեամբ Զահէի խմբապետ պրն. Նուպար Մանկասարեանի:

Հանդէսը տեղի ունեցաւ Սինէ Ամփիրի սրահին մէջ, ուր աչքի կը զարնէին Հ.Մ.Ը.Մ.ի գոյգ դրօշակները, 15 այլ դրօշներու կարգին: Եղան նաեւ ճառասուլիսներ, որոնց մասնակցեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը՝ ընթերցումովը հայերէն ուղերձի մը, որուն արաբերէն թարգմանութիւնն ալ կարդացուեցաւ, կէցցէնեբու եւ բուն ծափերու տեղի տալով:

Օգոստոս 13ին Պաալպէք այցելեց Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ պրն. Վ. Կիւրճեան եւ բազմաթիւ անդամներու եւ բարեկամներու առջեւ պարզեց Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը եւ հայ երիտասարդութեան վիճակուած դերը:

Յարգելի ներկայացուցիչին բանախօսութիւնը խոր տպաւորութիւն գործեց: Գահիրէէն հիւրաբար քաղաքս գտնուող պրն. Արմենակ Զիլինկիրեան իր կարգին քաջալերական խօսքեր ըրաւ եւ 10 լ. ոսկի նուիրեց: Նոյնքան գումար մը նուիրեց պրն. Վարդան Մախսազալեան, որ գնահատելի դեր ունեցած էր նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի կազմութեան մէջ: Ուրիշներու ալ մասնակցութեամբ 75 ոսկիի բարձրացաւ նուիրատուութեանց գումարը:



ԵՐԳ՝ ՈՒԺԻ ԵՒ ԽՆԴՈՒԹԵԱՆ

Ահաւասիկ գրիչն իմ առած՝ թաթախած խինդով ցողաթուրմ, Գրիչ, որ սիրերգներ է սրնգում եւ երկնում է երգեր մարտական, ես, որպէս ուժի եւ գեղեցկութեան կարմրասի՛րտ մի քուրմ, երգում եմ գունդագունդ այս Ե՛րթը յաղթական:

Դո՛ւք, երկրիս չքնա՛ղ աղջիկներ, եւ դո՛ւք, տղանե՛ր խնդուն, Ո՛վ անընկճելի սերունդ՝ ներկայի մեր արեւավառ, Շառաչում էք ինչպէս շեփորները շէկ ու թնդում ինչպէս թմբուկներ թնդում, եւ քայլում, դասակ առ դասակ, ինչպէս տեղահան անտա՛ռ:

Ձեր ամէն մէկի շուքի հետ քայլում է կենսախինդ մի գարուն, Ամէն մի նագանի աղջիկ՝ Յուլիսեան ամառ է հուրիուր, Ամէն մի մկանուտ տղայի շնչե՛ղ թոքերում Շնչում է մեր կեանքի շո՛հնդը եւ ամբողջ մեր խի՛նդը ոսկեհուր:

Դուք խինդի անսահման ծո՛վ էք եւ ուժի՛ անցամաք ովկէա՛ն եւ քայլող արշալոյս ներկայի, որ դէպի գալիքն է գնում, Դուք պայքար էք, եւ երգ էք, եւ կեա՛նք, եւ կեանքի սկիզբ ու ընթա՛ցք անհատնում:

Եւ ես, նայելով ձեր երթին՝ ուժի եւ գեղեցկութեան, Խորիում եմ, որ չե՛ն ունեցել այսքան վեհութիւն եւ կի՛րք – Եւ ո՛չ Ողիմպիան խաղերը, որից թնդում էր Յելլադան եւ ոչ էլ մո՛տքը Կեսարի՛ յաղթական կամարի տակից:

Ձեր գորասիւններից ձերմակ՝ թնդում եմ քաղաքները մեր, եւ խայտուն գիւղերն հեռաւոր, եւ խլիրտ գիւղերը մօտիկ, եւ ամբողջ մի անծայր երկիր՝ դառնում է ո՛ւժ, գեղեցկութի՛ւն, սէ՛ր, եւ կապում է մէջքին կանաչ կարմիր գօտի:

Քայլեցէ՛ք, չքնա՛ղ աղջիկներ, եւ դո՛ւք, տղանե՛ր վստահ, Թող սարսի անարգ թշնամին ձեր երթից հզօր, առնակա՛ն, Քանգի շողում է գալիքի հորիզոնը բիւրեղից յստակ, Քանգի ձերն է կեանքը, ձերն է սէրը եւ ձերն է պայծառ ապագան:

ՍՈՂՈՍՈՆ ՏԱՐՕՆՑԻ

ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱՄՇԱԿՈՒՄԻ ԻՐԱՔԱՀԱՅ ՄԱՐԶԻՉ-ԻՐԱԲԱՐԱՐԸ՝ ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ



ներ ան հանդիսացած է Պասրայի եւ հարաւային Իրաքի ծանրաբարձութեան փետուր կշիռքի (60 քկ., 67 քկ.) ախոյեան: Հետագային ան դարձած է հաշմանդամներու ծանրաբարձութեան եւ մարմնամշակումի մրցումներու միջազգային իրաւարար: Եղբ. Անդրանիկ 1993էն ի վեր Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղի ծանրաբարձութեան եւ մարմնամշակումի խումբերուն մարզիչն է: Միաժամանակ, ան մարզիչի պաշտօններ ստանձնած է իրաքեան



Իրաքեան մարզական շրջանակներուն հանրածանօթ անուն մըն է եղբ. Անդրանիկ Նահապետեանը, ծանրաբարձութեան եւ մարմնամշակումի փայլուն մարզիչը, որ այժմ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղի վարչութեան: Եղբ. Անդրանիկ ծնած է 1944ին, Պասրա: 1964էն սկսեալ, երկար տարի-



շարք մը ակումբներու մէջ: 1994էն ի վեր ան Իրաքի հաշմանդամներու ծանրաբարձութեան ազգային խումբին մարզիչն է: Խումբին հետ արձանագրած է փայլուն յաջողութիւններ եւ Իրաքին ապահոված է բազմատասնեակ մետալներ: Շնորհիւ իրեն, Իրաքի ազգային խումբը վերջին չորս ողիմպիականներու (Աթլանթա, Սիտնի, Աթէնք, Փեքին) մասնակցութեան իրաւունք ստացած է: Եղբ. Անդրանիկ ամուսնացած է եւ տէր չորս զաւակներու:

ՀԱՅԱԶԳԻ ԴԵՄՔԵՐ

ԳՈՌ ՄԱՐՏՈՅԵԱՆ՝ ՖՈՒԹՊՈՒԻ ԱՊԱԳԱՅ ԱՍՏՂ ՄԸ

Եթէ ֆուտպոլի սիրահար մըն էք, անպայման պիտի սիրէք այս տղան: Հազիւ տասը տարեկան է ան: Անունը՝ Գոր Մարտոյեան: Ծնած է Մոսկուա, 1997ին: Տարի մը խաղացած է «Սպարտակ Մոսկուա»-ի կրտսերներու կազմէն: Կիպրոս փոխադրուելէ ետք, քանի մը մրցաշարքերու ընտրուած է լաւագոյն խաղացող: Կիպրոսի մէջ, շրջան մը ան մաս կազմած է «Ափոէլ» հանրածանօթ խումբին, ապա՝ Կիպրոսի կրտսերներու ֆուտպոլի ակադեմիային: Գոր այժմ որեւէ խումբի մաս չի կազմեր, բայց ան ջա-

նադիր է իր նպատակին հասնելու: Իր նպատակը... մաս կազմել եւրոպական ֆուտպոլի մեծ խումբի մը: Ֆուտպոլը շատ կարեւոր է Գորին համար, սակայն կրթութիւնը՝ աւելի կարեւոր: Այս տարի ան Նիկոսիոյ «Նարեկ» վարժարանի աշակերտ է: Ֆուտպոլի ապագայ այս աստղին ծանօթանալու համար կ'արժէ այցելել համացանցի հետեւեալ կայք էջերը: <http://www.youtube.com/watch?v=glAiniATSN4> <http://www.youtube.com/watch?v=9jGgGGwJZDM>

ՃԱՏՐԱԿ/ՇԱՀՄԱԹ



ԹԱԳԱՖՈՐՆԵՐՈՒՆ ԽԱՂԸ ԵՒ ԽԱՂԵՐՈՒՆ ԹԱԳԱՖՈՐԸ

Կարծիքները կը տարբերին խաղին պարսկական թէ հնդկական ծնունդին մասին: Արեւելեան այս խաղին գոյութիւնը փաստուած է 3500 թուին (Ն.Ք.): Ապագայ պեղումները թերեւս անելի հին թուականներու եւս հասցրնեն մեզ:

Խաղին մասին պատմուած ականդոթիւններէն մէկն է, որ պիտի յիշենք հոս, թերեւս ամէնէն հետաքրքրականն ու հանրածանօթը:

ժամանակին...

Կար ու չկար... Թագաւոր մը կար: Այս Թագաւորին անունը Շիրամ էր: Կը պատմուի թէ... Շիրամ ծանօթանալով ճատրակին, կը հիանայ անոր այդքան խելացի յղացումին վրայ եւ կանչել կու տայ հնարող ծերունին, զայն վարձատրելու համար:

-Պահանջէ՛ եւ պիտի ստանաս,- կ'ըսէ Թագաւորը:

Ծերունին մտածկոտ, լուռ կը մնայ: Թագաւորը քաջալերելով զայն կը շարունակէ.

-Մեծ է հարստութիւնս, ինչպէս գիտես, ուստի մի վարանիր, խնդրէ եւ պիտի կատարուի ցանկութիւնդ, ինչ որ ալ ըլլայ այդ:

Ծերունին մէկ օր ժամանակ կ'ուզէ մտածելու համար, ու յաջորդ օր Թա-

գաւորին ներկայանալով կը յայտնէ իր ցանկութիւնը:

-Տէր Թագաւոր, խնդրանքս է, որ ճատրակիս 64 քառակուսիներէն առաջինն համար տրուի ինծի մէկ հատիկ ցորեն:

-Մէկ հատիկ պա՞րզ ցորեն, կը զարմանայ Թագաւորը:


-Այո, տէր Թագաւոր, իսկ երկրորդ քառակուսիին համար 2, երրորդին 4, չորրորդին 8, հինգերորդին՝ 16, վեցե-

րորդին 32...

-Կը բաւէ ծերուկ, հասկնալի եղաւ, ճատրակիդ քառակուսիները պիտի լեցւին ցորենով, եւ ամէն մէկ քառակուսի նախորդին կրկնապատիկովը: Բայց լաւ գիտցիր, թէ այսպէս ջնջին նուէր մը խնդրել Թագաւորէն վայել չէ քեզի պէս ծերունիի մը համար: Գնա, ծառաներս քեզի պիտի յանձնեն պարկ մը ցորենը:

Կ'ըսեն, թէ...

Ճաշի ընթացքին, արքան կը յիշէ ծերունին եւ իր խեղճ վարձատրութիւնը,



ու ծառաներուն հարցնելով կը հասկընայ, թէ պալատին հաշուապահները տակաւին կ'աշխատին գտնել ծերունիներ տրուելիք ցորեններուն թիւը:

Գիշերը, անկողին երթալէ առաջ, Շիրամ կը հարցնէ՝

-Մերունին ե՞րբ ստանձնեց ցորենի իր պարկը:

-Տէր թագաւոր, հաշուապահները յոյսով են, որ վաղը արեւածագէն առաջ գտած կ'ըլլան ցորեններուն թիւը,- կ'ըլլայ պատասխանը:

Թագաւորը կը զարմանայ այս ուշացումին համար, կը զայրանայ ու պատժել կը սպառնայ անպարտաճանաչ հաշուապահները:

Աւանդուծիւնը կ'ըսէ, թէ...

Առաւօտուն, հաշուապահները փութալով Շիրամի մօտ, կը յայտնեն թէ ծերունիին ցանկուծիւնը իրականացնելը անկարելի է:

-Կարելի բան չէ, որ լեցուն ամբարներս անկարող մնան գոհացնելու այդ-

պիսի փափաք մը: Հրամանքս պէտք է կատարուի, կը բարկանայ թագաւորը:

-Տէ՛ր արքայ, ներեցէք մեզի յայտնելու, թէ ձեր կարողութեան սահմաններէն դուրս է իրականացնել այդպիսի փափաք մը, նկատի ունենալով, որ ո՛չ մեր երկրի սահմաններուն մէջ, ո՛չ ալ աշխարհի վրայ որեւէ տեղ կը գտնուին այդքան թիւով ցորենի հատիկներ, իսկ եթէ անպայման վարձատրել կ'ուզէք այդ ծերունին, հրաման տուէք ուրեմն, որ աշխարհի բոլոր գետինները հերկուող արտերու վերածուին, չորցուին ծովերն ու ովկիանոսները, հալին ձիւնն ու սառոյցը, եւ այս բոլոր գետինները ցանուին ցորեն, ու անոնց հունձքը տրուի ծերունիին: Այն ատեն միայն ան ստացած կ'ըլլայ իր վարձատրուծիւնը:

Ապա հաշուապահը կու տայ ցորեններուն թիւը, որն է ճիշդ՝

-18, 446, 744, 073, 709, 551, 615 հատիկ:

Այս է աւանդուծիւնը, զոր չենք գի-

տեր թէ ճի՞շդ է թէ ոչ, իսկ ինչ կը վերաբերի յիշեալ ցորեններու թիւին, հաստատ իրողութիւնն է, որուն կարելի է հասնիլ թուաբանական փոքր հաշիւով մը՝ 64 անգամ բազմապատկելով 2 թիւը եւ արդիւնքէն հանելով 1ը:

Երեւակայելու համար այս հսկայական թիւին մեծութիւնը, փորձենք գտնել տարածութիւնները այն ամբարին, զոր պիտի կարենայ ամբարել այսքան ցորեն, գիտնալով թէ մէկ մեթր խորանարդը կ'առնէ 15 միլիոն հատիկ ցորեն: Ուրեմն, ծերունին պէտք պիտի ունենար 12,000,000,000,000 մեթր խորանարդ կամ 12,000,000 քառ. մեթր խորանարդի, իսկ եթէ ամբարին լայնքը 10 մեթր ըլլար ու բարձրութիւնը 4 մեթր, պէտք պիտի ունենար 300,000,000 քառ. մեթր երկարող տարածութեան:

Այսինքն երկու անգամ մեծ այն հեռաւորութենէն (149,000,000 քառ. մեթր), որ աշխարհը կը բաժնէ արեւէն:

With the compliments of

Restaurant Al-Mayass



ԼԵՎԱՄԸ ՎԵՐՍՏԻՆ ԻՐ ՇՈՒՐՁ ԿԸ ՀԱՄԱԽՄԲԷ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՐԶԱՍԷՐ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ

Բանի մը տարուան ընդմիջումէ ետք, ԼԵՎԱՄ-Սը (Լիբանանահայ Երկրորդական Վարժարաններու Աշակերտական Մարզախաղեր) անցնող ամիսներուն վերստին իր շուրջ համախմբեց լիբանանահայ մարզասէր աշակերտութեան ստուար խաւ մը: Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄի յանձնախումբին կազմակերպութեամբ, Շաբաթ, 23 Փետրուար 2008ին ազդանշանը տրուեցաւ այս խաղերուն եւ այնուհետեւ շաբաթական դրութեամբ խաղերը կ'ընթանան կանոնաւոր ձեւով:

Խաղերուն բացումը տեղի ունեցաւ հանդիսաւոր տողանցքով՝ Պուրճ Համուտի թաղերուն մէջ: ԼԵՎԱՄի մասնակից վարժարաններու աշակերտները, Հ.Մ.Ը.Մ-ի չեփորախումբին առաջնորդութեամբ, տողանցեցին Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Վարժարանէն մինչեւ Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի շրջափակ, ուր տեղի ունեցաւ պատշաճ հանդիսութիւն:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմչիբեան, Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ, Հայկազեան Համալսարանի ներկայացուցիչ Անդրանիկ Տաքէսեան, Ազգ. Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի տնօրէն եղբ. Վիգէն Աւագեան, մարզանքի ուսուցիչներ եւ ծնողներ: Այս առիթով խօսք առաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսիկ Պարսումեան: Ան ողջունեց ԼԵՎԱՄի կազմակերպումը, իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակին նուիրուած առաջին ձեռնարկ:

ԼԵՎԱՄի կարեւորութեան մասին խօսելով, եղբ. Պարսումեան յայտնեց. «ԼԵՎԱՄը աւանդութեան վերածուած իր առաքելութեամբ անգամ մը եւս կ'ուզայ միանալու հայ դպրոցին՝ իր կողքին համախմբելով լիբանանահայ գրեթէ բոլոր վարժարանները յաճախող աշակերտները, անոնց մէջ զարգացնելով մրցակցութեան եւ պայքարի ազնիւ ոգին, ազգային եւ եղբայրական միասնորոտի մը մէջ, վերջապէս՝ պատրաստելով կարգապահ քաղաքացիներ»:

Իր խօսքին մէջ, եղբ. Պարսումեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց Հայկազեան Համալսարանին, որ բարոյապէս





եւ նրվթապէս իր մասնակցութիւնը կը բերէ ԼԵՎԱՄի յաջողութեան:

Խօսքէն ետք, եղբ. Պարսումեան ԼԵՎԱՄի վահանը յանձնեց ԼԵՎԱՄի յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Փիրայր Փինեանին: Այնուհետեւ, զոլէճի սրահին մէջ սկսան փինկփոնկի խաղերը:

Ստորեւ՝ փինկփոնկի, ճատրակի եւ մինի-ֆութպոլի մրցումներուն արդիւնքները:-

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

ԱՂՋԻԿՆԵՐ

1996ի ԾՆՈՒՆԴ ԵՒ ՎԵՐ

- 1. Աննա Մարգարեան (Ս. Քառասնից Մանկանց)
- 2. Նինա Մարգարեան (Ս. Քառասնից Մանկանց)
- 3. Սէրլի Սամուէլեան (Ճեմարան)
- 4. Նէնսի Մունջօղլեան (Ճեմարան)

1994-1995ի ԾՆՈՒՆԴ

- 1. Դալար Պոյաճեան (Ճեմարան)



- 2. Կասիա Սամուէլեան (Ճեմարան)
- 3. Ռիթա Ղազարեան (Լ. եւ Ս. Յակոբեան)

1992-1993ի ԾՆՈՒՆԴ

- 1. Նայրի Ոսկերիչեան (Ճեմարան)
- 2. Սեզա Ոսկերիչեան (Ճեմարան)
- 3. Քրիստինա Տէմիրճեան (Շամլեան-Թաթիկեան)
- 3. Մարալ Պաղտասարեան (Լ. եւ Ս. Յակոբեան)

1990-1991ի ԾՆՈՒՆԴ

- 1. Վարդենի Քէմիճեան (Ճեմարան)
- 2. Սինթիա Պարիկեան (Ճեմարան)
- 3. Թամար Գարակէօզեան (Ս. Խաչ)
- 3. Մարիա Ազատեան (Գարակէօզեան)

ՏՂԱՔ

1996ի ԾՆՈՒՆԴ ԵՒ ՎԵՐ

- 1. Վարանդ Գլընճեան (Ճեմարան)
- 2. Ստեփան Թէքէլէլեան (Ս. Քառասնից Մանկանց)
- 3. Շանթ Գէորգեան (Ճեմարան)
- 3. Սերժ Տէկիրմէնճեան (Ս. Քառասնից Մանկանց)

1994-1995ի ԾՆՈՒՆԴ

- 1. Վրդէն Սվաճեան (Ճեմարան)
- 2. Աւօ Մանճեան (Ճեմարան)
- 3. Քրիստ Եմէնճեան (Ս. Քառասնից Մանկանց)
- 3. Մհեր Տէր Դաւիթեան (Շամլեան-Թաթիկեան)

1992-1993ի ԾՆՈՒՆԴ

- 1. Աւօ Մունջօղլեան (Ճեմարան)
- 2. Վարանդ Պոյաճեան (Ճեմարան)
- 3. Միսաք Պոյաճեան (Ե. Մանուկեան)



3. Արթուր Ղազարեան (Լ. եւ Ս. Յակոբեան)

1990-1991Ի ԾՆՈՒՆԴ

1. Սահակ Փայլեան (Ճեմարան)
2. Խաժակ Խաչատուրեան (Ճեմարան)
3. Խաժակ Ճինպաչեան (Ե. Մանուկեան)
3. Խաժակ Աղամեան (Լ. եւ Ս. Յակոբեան)

ՃԱՏՐԱԿ

10 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ

ՏՂԱՔ

1. Հրակ Գրըրպոզեան (Ճեմարան)
2. Աւետիս Մարտիրոսեան (Ե. Մանուկեան)
3. Կարապետ Խաւորճեան (Ե. Մանուկեան)
3. Ալէք Էլպէքեան (Ճեմարան)
3. Ստեփան Աշգարեան (Կ. Բ. Վ.)

ԱՂՋԻԿՆԵՐ

1. Արմիկ Գուլումեան (Ս. Քառասնից Մանկանց)

12 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ

ՏՂԱՔ

1. Նարեկ Նաճարեան (Ճեմարան)
2. Մհեր Գաբրիելեան (Ս. Քառասնից Մանկանց)
3. Նարեկ Իփրաճեան (Կ. Բ. Վ.)

ԱՂՋԻԿՆԵՐ

1. Աննա Մարգարեան (Ս. Քառասնից Մանկանց)
1. Նինա Մարգարեան (Ս. Քառասնից Մանկանց)
2. Նայիրի Յակոբեան (Վահան Թէքէեան)
3. Մեղրի Մերուպեան (Ճեմարան)

14 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ

ՏՂԱՔ

1. Դաւիթ Սլիւսեանեան (Հռիփսիմեանց)
2. Սեւակ Արոյեան (Լ. եւ Ս. Յակոբեան)
2. Սերո Աւօ Գոլաքեան (Կ. Բ. Վ.)

ԱՂՋԻԿՆԵՐ

1. Արշօ Յովհաննէսեան (Լ. եւ Ս. Յակոբեան)
2. Լուսին Գաբրիելեան (Լ. եւ Ս. Յակոբեան)
3. Կրասիա Սրապոնեան (Ս. Ազնէս)

16 ՏԱՐԵԿԱՆՔԻՆ ՎԱՐ

ՏՂԱՔ

1. Ռազմիկ Օգնայեան (Ե. Մանուկեան)
2. Հրակ Պետրոյեան (Ճեմարան)
3. Սերուժ Տոնտոյեան (Կ. Բ. Վ.)





ԱՂՋԻԿՆԵՐ

1. Փօլիկ Սրապոնեան (Ս. Ազնէս)

18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

ՏՂԱՔ

- 1. Ժիրօ Օզնայեան (Ե. Մանուկեան)
- 2. Յարութ Պոյաճեան (Կ. Բ. Վ.)
- 3. Գէորգ Սաթուրեան (Կ. Բ. Վ.)

ՄԻՆԻ-ՖՈՒԹՊՈԼ

Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆ

ՓՈՔՐԵՐ

- Թորոսեան - Հռիփսիմեանց 1 - 0
- Ս. Քառասնից Մանկանց - Ճեմարան 2 - 2
- (Ս. Քառասնից Մանկանց փեննալթիներով՝ 2 - 1 յաղթական)

ՄԻՋԱԿՆԵՐ

- Թորոսեան - Լ. եւ Ս. Յակոբեան 3 - 2
- Շամլեան-Թաթիկեան - Խանամիրեան 6 - 3
- Աբգարեան - Կերթմէնեան 4 - 1
- Ե. Մանուկեան - Գէորգ Հարպոյեան 5 - 0
- Ճեմարան - Ս. Ազնէս 4 - 2
- Վահան Թէքէեան - Աբգարեան 2 - 0
- Ե. Մանուկեան - Թորոսեան 2 - 1

Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

ՄԵԾԵՐ

- Լ. եւ Ս. Յակոբեան - Գէորգ Հարպոյեան 11 - 0
- Ե. Մանուկեան - Կեղր. Բարձր. Վարժ. 2 - 0

ՓՈՔՐԵՐ

- Թորոսեան - Կ. Բ. Վ. 2 - 1

Ս. Ազնէս - Մերոպեան 1 - 0

Ս. Քառասնից Մանկանց - Գ. Հարպոյեան 4 - 1

ՄԻՋԱԿՆԵՐ

Ճեմարան - Շամլեան-Թաթիկեան 3 - 1

ՄԵԾԵՐ

Շամլեան-Թաթիկեան - Ս. Հռիփսիմեանց 5 - 1

Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

ՓՈՔՐ ՏՂԱՔ

- Ե. Մանուկեան-Կերթմէնեան 4-2
- Ս. Քառասնից Մանկանց-Թորոսեան 4-0

ՄԻՋԱԿ ՏՂԱՔ

- Մերոպեան-Ե. Մանուկեան (Մերոպեան փեննալթիներով՝ 3-2 յաղթանակ)
- Ճեմարան-Վահան Թէքէեան 6-1

ՄԵԾ ՏՂԱՔ

Շամլեան-Թաթիկեան-Ե. Մանուկեան 1-0

ՃՇԴՈՒՄ

«Մարզիկ»ի անցեալ թիւի նկարներու բացատրութիւններուն մէջ տեղ գտած էին երկու վրիպակներ, որոնց համար կը խնդրենք մեր ընթերցողներուն ներողամտութիւնը:

Էջ 27ի երկրորդ նկարին տակ պէտք էր կարդալ. մասնաճիւղի ատենապետ եղբ. Միսաք Թաթիկեան: Իսկ էջ 33ի առաջին նկարին տակ պէտք էր կարդալ. Շրջանալին Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Քէօշկերեան:



ՔԱԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՉԳՐԻ ՄԱՐԶԱՆԱՂԵՐԸ ԵԶՐԱՓԱԿՈՒԵՑԱՆ ՄԵԾ ՈԳԵԻՈՐՈՒԹԵԱՄԲ

Փուլթպոլի մարզադաշտին վրայ, բազմահարիւր ծնողներու, ուսուցիչ-ուսուցչուհիներու, տնօրէններու, մարզասէր համակիրներու եւ Հ.Մ.Ը.Մ.ականներու մասնակցութեամբ:

Զեռնարկին խօսնակներն էին քոլորէր Սիւզի Օհանեան (հայերէն) եւ Նայիրի Տէրտէրեան (անգլերէն), որոնք բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, յայտնեցին, որ ՔԱ.Հ.Ա.Մ.ը պարզ մրցաշարք մը չէ, այլ կը նպատակադրէ համախմբել շրջանի հայ վարժարաններու երկսեռ աշակերտութիւնը եւ անոնց համար ստեղծել մարզական մաքուր միջավայր մը, Հ.Մ.Ը.Մ.ի հովանիին տակ:

Ապա, մարզադաշտ ներկայացաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը, գլխաւորութեամբ եղբ. Վարդան Ասատուրեանի: Իր ազգայնաշունչ եղանակներով շեփորախումբը մեծ ոգեւորութիւն ստեղծեց ներկաներուն մօտ: Մասնաճիւղի խմբապետ եղբ. Ժիրո Թաթիկեանի գլխաւորութեամբ, գրօշակի տպաւորելի արարողութիւնը կատարեցին Հ.Մ.Ը.Մ.ի Փաստօրինայի «Ազատամարտ» մասնաճիւղի արի-արեւոյճները, որոնք ինք-

Մարտ Բէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵՆԸՍ

Կիրակի, 9 Մարտ 2008ի ամբողջ օրը, Կլէնտէյլ Գոլէճի մարզադաշտերուն վրայ տեղի ունեցան Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերու՝ ՔԱ.Հ.Ա.Մ.ի վերջին հանգրուանի փոխառնական մրցումները, բազմաթիւ մարզասէրներու եւ յատկապէս ծնողներու քաջալերական ներկայութեամբ:

Ամիսներու մրցակցութիւններու ընթացքին, զանազան հանգրուաններով իրականացած էին թեթեւ ակթիվի, փինկփոնկի, վոլիպոլի, ճատրակի եւ ֆուլթպոլի մրցումները: Վերջին հանգրուանով, 22 Փետրուարէն ի վեր տեղի կ'ունենային ամենալայն ժողովրդականութիւնը վայելող պասքէթպոլի մրցումները:

Շրջանէն ներս աւանդական դարձած աշակերտական գեղեցիկ այս մարզախաղերու փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը, կէսօրէ ետք ժամը 5ին, Կլէնտէյլ Գոլէճի





նալստահութեամբ մարզադաշտ ներկայացուցին Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ եւ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշները, բարեկեցին ներկաները եւ տեղադրեցին զանոնք մարզադաշտին վրայ, որոշուած վայրը: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները դարձեալ նուագեց Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը:

Այնուհետեւ, տողանցեցին մարզախաղերուն մասնակցած 12 հայկական վարժարաններու մարզիկ աշակերտ-աշակերտուհիները, իրենց մարզիչներուն առաջնորդութեամբ: Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին խրախուսիչ եղանակներով, հպարտութեամբ քայլեցին Ռոզ եւ Ալէք Փիլիպոս, Արի Կիրակոս, Հայ Քոյրերու, Արշակ Տիգրանեան, Յովսէփեան, Շամլեան, Սահակ Մեսրոպ, Ֆերահեան, Հ.Բ.Ը.Մ-ի Մանուկեան-


Տէմիրճեան, Մերտինեան, Մխիթարեան եւ Մեսրոպեան վարժարաններու աշակերտները, որոնք ներկաներու երկարաշունչ ծափողջոյններուն արժանանալէ ետք, գրաւեցին իրենց տեղերը մարզադաշտին վրայ:

Մուշեղ Արք. Մարտիրոսեան յատուկ առաքելութեամբ Լիբանան գտնուելով, իր բարեմաղթանքներն ու օրհնութիւնները փոխանցեց Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ Արտակ Քհնյ. Տէմիրճեան եւ ըսաւ. «Կարելի չէ լուռ մնալ եւ չզնահատել այսպիսի երեւոյթ մը, որ ի մի բերած է շրջանի բոլոր վարժարաններու հայ աշակերտները եւ վստահ եմ, որ այս մրցումներէն ետք, դուք ալ պիտի վկայէք, որ բոլորն ալ յաղթական են, որովհետեւ բոլորն ալ իրենց սրտերուն մէջ ձգտումը ունին լաւագոյնին, վեհագոյնին ու ճշմարիտին: Հե-



տեւաբար, մեծապէս կը գնահատեմ այս աշխատանքը, փոխանցելով Արեւմտեան Միացեալ Նահանգներու Թեմի առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի գնահատանքներն ու օրհնութիւնները»:

Օրուան գեղեցիկ անակընկալն էր հայազգի արհեստավարժ Փուլթպոլիստ, երիտասարդ մարզիկ Ալէքօ Իսկանտարեանի յայտնութիւնը: Ան ներկայիս մաս կը կազմէ Chivas USA ծանօթ խումբին: Ան հրաւիրուած էր այս հանդիսութեան, որպէսզի իր պատգամը փոխանցէ աշակերտութեան: Հպարտանքի երկարաշունչ ծափողջոյններով մարզադաշտ ներկայացաւ Իսկանտարեան, որ ողջունելէ ետք ներկաները՝ շնորհակալութիւն յայտնեց



Ալեքո Իսկանտարեան:



Իրեն ցուցաբերուած ընդունելութեան համար եւ ըսաւ. «Ինծի համար շատ կարեւոր էր ներկայանալ հոս եւ տեսնել հայկական մեծաթիւ դէմքեր: Մեծապէս հպարտ եմ հայ ըլլալուս: Զեւով մը տարօրինակ էր ինծի համար, միակ հայը արհեստավարժ Փուլթայոյի խումբի մը մէջ, ուրախ եմ, որ նաեւ Շուրա

Մովսիսեանը նոյն խումբին մէջն է եւ մենք երկուքս հպարտութեամբ կը ներկայացնենք ձեզ, ամէն անգամ որ ներկայանանք մարզադաշտ: Մեր լաւագոյնը պիտի ընենք ներկայացնելու ձեզ»:

Ապա, խօսքը երեխաներուն ուղղելով, շեշտեց, թէ «Մեծ





ճիզ ու աշխատանք կը պահանջուի հասնելու համար ձեր նպատակներուն եւ երազանքներուն: Փոքր տարիքէս երագած էի ֆուտպոլի մարզիկ ըլլալ եւ ահա երագս իրականացած է, շնորհիւ ջանքերուս եւ մանաւանդ ծնողքիս հետեւողական քաջալերանքին, որոնք գիտ պահեցին ճիշդ ուղիի մէջ: Երեխաներուն համար ամենակարեւորն է ըլլալ ճիշդ ուղիի մէջ, որ պէսզի իրականացնեն իրենց նպատակները»: Ան հրաւիրեց բոլոր մասնակիցները ներկայ գտնուելու մրցումներուն:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց մարզական պատասխանատու եղբ. Ժանօ Քահվէճեան, որ անսահման ուրախութեամբ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, շնորհաւորեց բոլորը օրուան գեղեցիկ համախմբումին համար, որ ներկայութենէ աւելի Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ իրենց հաւատքը կը դրսեւորէ:

«ՔԱ-Հ.Ա.Մ-ը, 24րդ տարին բոլորելով, արդէն շատո՞նց աշակերտական պարզ մարզախաղեր ըլլալէ դադրած է եւ ազնիւ նկարագիր կերտող ու մանաւանդ հայու ինքնագիտակցութիւնը հայ աշակերտին էութեան մէջ արմատաւորող

դարձնող դարձած է:

«Այսօր, բոլորս մասնակից կը դառնանք պատմական իրողութեան մը, որովհետեւ ՔԱ-Հ.Ա.Մ-ը աշակերտական պարզ հաւաք մը ըլլալէ անդին, մեր բոլորին հոգածութեան յանձնուած երիտասարդ սերունդին յաղթանակներ պարգեւելու եւ նորանոր նուաճումներ արձանագրելու յուսադրիչ օր մը դարձած է», ըսաւ եղբայրը:

Ապա, ՔԱ-Հ.Ա.Մ-ի նպատակին անդրադառնալով ան ընդգծեց. «Համախմբել շրջանի հայ աշակերտութիւնը մարզական մաքուր մթնոլորտի մը մէջ, անոնց մարզական թաքուն ձիրքերը յայտնաբերելու եւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ը ծանօթացրնելու համար»:

Եղբայրը յատուկ շնորհակալութիւն յայտնեց մարզախաղերուն մասնակցող հայկական վարժարաններու մարզանքի ուսուցիչներուն, տնօրէններուն եւ մանաւանդ ծնողներուն, որոնք համբերութեամբ հետեւեցան մարզախաղերուն եւ բաժնեկից դարձան արձանագրուած նուաճումներուն:

Եզրակացնելով, եղբայրը կոչ ըրաւ ծնողներուն, իրենց





գաւակները վստահելու Հ.Մ.Ը.Մ.ին եւ Հ.Մ.Ը.Մ.ի նման հայակերտ միութիւններուն, «Որպէսզի անոնք հեռու մնան երկրասարդութիւնը կլանող չար բարքերէն: Որպէսզի անոնք հեռու մնան նեխած շրջանակներէ եւ կառչին մեր արմատներուն, որովհետեւ անոնք մեր ժողովուրդի պայծառ ապագան են»:

Մարզախաղերուն մասնակցող վարժարաններու տնօրէններուն անունով խօսք առաւ Սահակ Մեսրոպ վարժարանի տնօրէն Շահէ Կարապետեան, որ առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին, որ «Տարի մը եւս յաջող մարզական խաղեր ծրագրելով ու կազմակերպելով, աւելի ընծայեց, որ հայ պատանի-պարմանուհիները մասնակցին մարզական խաղերուն: Կ'ուզեմ շնորհակարտել բոլոր հայ դպրոցները, իրենց տնօրէնութեամբ, ուսուցչական կազմերով, ծնողներով, բարեկամներով եւ սիրելի աշակերտներով, որ իրենց մասնակցութիւնը այս տարի եւս բերին, նեցուկ կանգնեցան եւ քաջալերեցին, որ 2008 ՔԱ.Հ.Ա.Մ.ի խաղերը յաջողութեամբ պսակուին», ընդգծեց Կարապետեան:

Ապա, ականատեսի վկայութեամբ ան յայտարարեց, որ «Մեր հայ մարզիկները ոչ միայն կը ձգտէին մետալներ շահելու, այլ՝ կերտելու կարեւոր յատկութիւններ, ինչպիսին էր մարզական ոգիով առաջնորդուիլ, խկապէս գնահատելի էր, որ իրենք հետեւեցան ՔԱ.Հ.Ա.Մ.ի բոլոր օրէնքներուն. միասնականութեամբ իրարու հետ դաշնակցեցան, իրարու յարգեցին. յարգանքը, որ շատ կարեւոր է եւ զայն ունեցան իրենց առաջնորդներուն եւ իրարու հանդէպ:

«Իմ աղօթքս եւ փափաքս է, որ մենք ՔԱ.Հ.Ա.Մ.ի այս խաղերուն միջոցով, միասնական հայրութեան ոգին պահենք եւ, ինչո՞ւ չէ, Աստուած խաղաղութիւն տայ մեր հայրենիքին, ներկայ պայմաններուն մէջ: Շնորհակալութիւն եւ կը տեսնուինք զալ տարի, 2009 ՔԱ.Հ.Ա.Մ.ի մարզական խաղերուն»:

Այնուհետեւ տեղի ունեցաւ այնքան սպասուած ախոյեանական բաժակներու յանձնումը: Ախոյեան խումբերու ներկայացուցիչները հպարտութեամբ ստանձնեցին իրենց յաղթանակի բաժակները Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանի եւ եղբ. Ժանո Գահվէճեանի ձեռամբ: Մինչ հանդիսատեսներու երկարաշունչ ծափողջոյններն ու բացազանչութիւնները աննկարագրելի ուրախ մթնոլորտ մը ստեղծեցին մարզադաշտէն ներս:

Շարք մը վարժարաններէ ֆուլթայլի եւ յատկապէս պասքեթպոլի մրցումներուն մասնակցեցան առաջին եւ երկրորդ դասարաններու աշակերտները: Է. դասակարգ նկատուող այս դասարաններու աշակերտութիւնը տարիքով եւ հասակով շատ փոքր ըլլալով, առ ի քաջալերանք, բոլորն ալ ստացան ախոյեանական բաժակներ:

(Լուսանկարները՝ Տօնիկ Տօնապետեանի)



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՒՆԱՏԱՅԻ, ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻՋ-ԴԻՒՄՆԱԿԱՆ Ե. ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՈՒՌԹԸՐԹ-ԱՌԲՆԻ ՄԷՋ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Վերջին չորս տարիներուն գեղեցիկ սովորութիւն դարձած է հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի երեք շրջաններու Շրջանային Վարչութիւններու դիւանները եւ սկաուտական բաժանմունքներու ղեկավարները տարին մէկ անգամ, եւ ընդհանրապէս Փետրուար ամսուն, երկօրեայ հանդիպում մը կազմակերպեն եւ անոր ընթացքին ծանօթանան շրջաններու գործունէութեանց, կարեւոր նուաճումներուն, դժուարութիւններուն եւ յատկապէս քննեն Հ.Մ.Ը.Մ.ը յուզող հարցեր: Նման հանդիպումներու շարքին



Միջ-դիւանական եւ սկաուտական հանդիպումներու մասնակիցներու խմբանկար:

հինգերորդը այս տարի տեղի ունեցաւ 16-17 Փետրուար 2008ին, Պոսթընի արևարձաններէն Ուոթըրթաունի Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան գրասենեակը: Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան

կողմէ ժողովին մասնակցեցան քոյր Մարո Քէշիշեան եւ եղբ. Յովիկ Պետեւեան, Արեւելեան շրջանէն՝ եղբայրներ Հրաչ Մեսրոպեան, Արա Մարկոսեան եւ Ռոպէրթ Քալանթարի, իսկ Գանատայէն՝ եղբայրներ Բարգէն Կարապետեան, Մոսիկ Թոփուզեան եւ Տիրան Շահինեան:

Երկօրեայ ժողովին ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, որ նաեւ ողջոյնի խօսքով քաջալերեց ժողովականները այս շինիչ հանդիպումին համար:

Բարի գալուստի խօսքերով ժողովին բացումը կատարեց հիւրընկալ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեսրոպեան: Ան առաջին հերթին ծանօթացման առիթ ընծայեց ներկաներուն: Ապա սկաուտ ղեկավարներն ու դիւանները կատարեցին իրենց առանձին հանդիպումները:

Դիւաններու բաժնի ժողովը վարեց հիւրընկալ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեսրոպեան:

Մասնակիցները յաջորդաբար ներկայացուցին իրենց շրջաններու գործունէութեանց ամփոփ գեկոյցները: Ապա, ժողովականները անդրադարձան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ մարզախաղերու մասնակցութեան մանրամասնութիւններուն: Ժողովը լայնօրէն անդրադարձաւ մարզախաղերու նախապատրաստութեան եւ բարելաման գծով տարուելիք աշխատանքներուն: Եղան շինիչ առաջարկներ: Յատկապէս շեշտուեցաւ մարզախաղերուն ամբողջական մասնակցութիւն բերելու կարեւորութիւնը: Կիրակուող մարզախաղերու պարագային, ժողովա-



Միջ-դիւանական ժողովէն պահ մը:



կանները կարեւոր գտան վոլիպոլի մարզախաղին զօրացումը, որպէսզի ան իր արդար տեղը ունենայ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն մէջ:

Մարզական միացեալ աշխատանքներու զարկ տարու հեռանկարով, որոշում տրուեցաւ յաջորդ հանդիպումին, սկաուտականին առնթներ կազմակերպել նաեւ մարզական պատասխանատուներու հանդիպում:



Համագործակցութեան կարեւորութենէն մեկնած, որոշուեցաւ որ երեք շրջանները միասնաբար կազմակերպեն դաստիարակչական սեմինարներ, միջ-շրջանային մարզախաղեր, ինչպէս նաեւ կատարեն տարեկան աշխատանքային ծրագիրներու փոխանակումներ, որպէսզի կարեւոր նախաձեռնութիւններուն մասնակցելու կարելիութիւն ստեղծուի:

Լայն ժամանակ տրամադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին նուիրուած աշխատանքներուն: Երեք շրջաններն ալ անխտիր, 2008 տարեշրջանի իրենց աշխատանքները նուիրած են Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակին: Ասկէ անկախ, փափաք յայտնուեցաւ, որ նոյն նպատակին նուիրուած միացեալ ձեռնարկ մը կազմակերպելու կարելիութիւնը ուսումնասիրել, պատմական այս թուականը յատկանշող կրճազարդեր, նամակի թուղթ, ծրարներ, դրոշմաթուղթ, շապիկներ եւ իւրայատուկ այլ իրեր հրատարակել:

Համագործակցութեան էական նախաձեռնութիւն նկատուեցաւ շրջաններու Շրջանային Ներկայացուցչական Ժողովներուն փոխադարձ մասնակցութիւնը:

Դիւանական հանդիպումի առնթներ տեղի ունեցաւ նաեւ երեք շրջաններու սկաուտական բաժանմունքներու ղեկավարներու միօրեայ հանդիպում, զոր վարեց հիւրընկալ շրջանի Շրջանային Սկաուտ Խորհուրդի ատենապետ եղբ. Զարեհ Գարակիլեան: Շահեկան այս հանդիպումին ընթացքին շեշտը դրուեցաւ համագործակցութեան եւ գիտելիքներու փոխանակման վրայ: Յատուկ շեշտ դրուեցաւ սկաուտական կարգերու իրագործման աշխատանքներուն վրայ: Վկայեալ կարգի պարագային որոշուեցաւ որդեգրել Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանին նիւթերը, իսկ Արարատեան կարգի պարագային, առաջարկուեցաւ թեկնածուն իր նախընտրած սկաուտական նիւթը պատրաստել իբրեւ թէզ եւ

ներկայացնել Կեդրոնական Վարչութեան: Այս ձեւով կարելիութիւնը կը ստեղծուի նաեւ հարստացնելու Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գրակառնութիւնը:

Ժողովը լայնօրէն զբաղեցաւ միջ-շրջանային սկաուտական բանակումի կազմակերպական հարցերով:

Հանդիպումին վերջին բաժինով, երեք շրջաններու միասնական աշխատանքին համար իր գոհունակութիւնը յայտնեց եղբ. Գօգօ Պալեան եւ ըսաւ. «Կեդրոնական Վարչութիւնը մեծապէս կը քաջալերէ նման նախաձեռնութիւնները: Անձնապէս եւս կը հաւատամ եւ կը քաջալերեմ նման հանդիպումները, որոնք ոչ միայն ծանօթացման կը նպաստեն, այլ նաեւ՝ համագործակցութեան եւ մանաւանդ գիտելիքներու, փորձառութիւններու եւ միութեանակալ նորութիւններու փոխանակման գեղեցիկ առիթ կը հանդիսանան»:

Հիւրընկալ շրջանի անունով շնորհակալութիւն յայտնեց եղբ. Հրաչ Մեսրոպեան եւ ընդգծեց կարեւորութիւնը նման հանդիպումներու, որոնք համագործակցութեան կարեւոր գրաւականներէն մէկն են:

Երկօրեայ հանդիպումը վերջ գտաւ Կիրակի, 15 Փետրուարի կէսօրին: Ժողովականները կէսօրուան ճաշով հիւրասիրուելէ ետք հրաժեշտ առին, յաջորդ հանդիպումը 14-15 Փետրուար 2009ին Լոս Անձելըսի մէջ կատարելու խոստումով:



ՊԱՏԿԵՐ ՄԸ ԱՄԵՆՈՅԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Թղթակից ԱԼՄԵՆՈ



Հ.Մ.Ը.Մ.ի Ալմելոյի սկաուտական կազմը, իր կիրակնօրեայ աշխատանքներու ծիրէն ներս, 24 Փետրուար 2008ին, կազմակերպեց **ՈՒՍԻ** մը: Ալմելոյի փողոցներուն մէջ սկաուտները խումբ առ խումբ հետեւեցան խաղին, որուն վերջին հանգրուանը եղաւ ակումբը, ուր սկաուտները միասնաբար անցուցին

իրենց յետմիջօրէն:

Տեղույն վրայ սկաուտները ստեղծեցին խանդավառ մթնոլորտ. անոնք երգեցին, պարեցին եւ սկաուտական խաղերով անցուցին իրենց ժամանակը: Այնուհետեւ, սկաուտներուն փոխանցուեցաւ դասախօսութիւն մը:

Վարչութեան կողմէ կատարուած հիւրասիրութեան իբրեւ արդիւնք սկաուտները այդ օր միասնաբար ճաշեցին ակումբէն ներս:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳՐԵՍԷՆԹԱ ՀՈՎԻՏԻ «ՇԱՆԹ» ՄԱՍՆԱԾԻՂԸ ՏՕՆԱԽՄԲԵՅ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 15ԱՄԵԱԿԸ

Մարո Քեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

Ուրբաթ, 7 Մարտ 2008ի երեկոյեան, Միչըն Հիլզի «Տէօքմէճեան» սրահին մէջ կազմակերպուած ճաշկերոյթ-պարահանդէսով մը նշուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գրեսէնթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղին հիմնադրութեան 15ամեակը, ներկայութեամբ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներու, համակիրներու եւ հիւրերու, որոնց կարգին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 32րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետիկեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմը եւ շրջանի քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ակնյայտ էր երիտասարդութեան մասնակցութիւնը, որ խրախուսիչ երեւոյթ էր:

Օրուան հանդիսավարութիւնը կատարեց մասնաճիւղի նախկին արեւոյշ, խմբապետուհի Փաթիլ Աբօջեան, որ ընդգծելով «Շանթ» մասնաճիւղին ստեղծման կարեւորութիւնը, շեշտեց անոր միջոցով ստեղծուած Հ.Մ.Ը.Մ.ական պատկանելիութեան միջնորդութիւնը, ընտանեկան մաքուր միջավայրի ստեղծումը եւ յաղթանակներ նուաճելու ձգտումը:

Ապա, մասնաճիւղին հիմնադիր վարչութեան կազմը ներկայացնելով, քոյրը շեշտեց, որ տասնհինգ տարի ետք,



Մասնաճիւղի գնահատագիրի յանձնում: Զախէն աջ՝ եղբայրներ Սթիւ Արթինեան, Ալէք Արարատեան եւ Վարուժ Պետիկեան:

անոնց տեսլականը նոր ձեւ ստացած է եւ գեղեցիկ թեւեր առնելով վերածուած է այսօրուան իրականութեան: Մասնաճիւղին արձանագրած յաջողութիւններուն մէջ քոյրը մատնանշեց անցեալի վարչութիւնները, որոնց յաջորդաբար ատենապետած են Կարպիս Էօլմէսէքեան (մահացած), Վարդգէս Շիրտըմեան, Կայծակ Շահպազեան, Վաչէ Մկրտիչեան, Սահակ Թադէոսեան, Թովմաս Տէօքմէճեան, Արփի Նալպանտեան եւ Ալէք Արարատեան: Քոյրը նաեւ մատնանշեց մասնաճիւղի այլ անդամներ, որոնք կարեւոր դեր խաղացած են մասնաճիւղին վերելքին: Սկսած Կարոտեանի գետնի վրայ՝ Զօհրապ Մարգարեան, Շողեր Զափարեան, բժիշկ Շանթ Շիրտըմեան եւ Ալին Կարապետեան: Մարզական գետնի վրայ՝ Մանուկ

Օհաննէսեան, Շահան Տէր Մկրտիչեան եւ ուրիշներ:

Մասնաճիւղին վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Ալէք Արարատեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, հպանցիկ ակնարկ մը նետեց մասնաճիւղին պատմութեան եւ արձանագրած նուաճումներուն վրայ: Եղբայրը յատկապէս շնորհակալութիւն յայտնեց մասնաճիւղին հիմնադիր վարչութեան եղբայրներ՝ հանգուցեալ Կարպիս Էօլմէսէքեանին (ատենապետ), Թովմաս Տէօքմէճեանին, Վարդգէս Շիրտըմեանին, Կայծակ Շահպազեանին եւ Ռազմիկ Գարախանեանին, որոնք ի գին մեծ զոհողութիւններու իրականացուցին շրջանի հայութեան երազը եւ հիմը դրին Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղին, հպարտութեան

ԱՅՍ ԷՋՐ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՐՈՒԹ Ի Հ.Մ.Ը.Մ.Ի «ՇԱՆԹ» ՄԱՍՆԱԾԻՂԸ



Մոմավառութենէն պահ մը:

գեղեցիկ առիթ մը ստեղծելով բոլորին:

«15 տարի ետք, նոյնքան հպարտութեամբ կը յայտնեն, որ մեր մասնաճիւղը մեծցած է անհամեմատ չափերով, շնորհիւ իր անդամներուն հաւատարմութեան, նուիրումին եւ շարունակական զօրակցութեան: Մեր մասնաճիւղը ներկայիս կը հաշուէ 850է աւելի անդամներ, որոնց կարգին են 75 սկաուտներ եւ AAA — G դասակարգերու պասքեպոլի 35 խումբեր: Մեր մարզիկ-մարզիկուհիները պասքեպոլի մրցաշարքերէն անկախ կը մասնակցին նաեւ Նաւասարդեանի թենիսի, փինկ-փոնկի, թեթի աթլէթի, լողի եւ այլ մրցումներու: Մասնաճիւղը աշխատանք կը տանի կազմելու ֆութպոլի խումբեր, որպէսզի կարենայ աւելի լայն մասնակցութիւն բերել Նաւասարդեան 33րդ Մարզախաղերուն», ընդգծեց եղբայր եւ շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան եւ շրջանի «Զաւարեան» Կոմիտէին:

Ապա, տեղի ունեցաւ պարգեւատրում: Մասնաճիւղին վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցած էր պարգեւատրելու մասնաճիւղին տարուան լաւագոյն սկաուտը եւ մարզիկը: Այսպէս, իբրեւ օրինակելի արի եւ սկաուտ խմբապետ պարգեւատրուեցաւ եղբ. Արա Իգանեան, իսկ իբրեւ մարզիկ եւ մարզիչ՝ եղբ. Ռազմիկ Տէր Մկրտիչեան:

Այս գեղեցիկ ժեսիւն յաջորդեց մասնաճիւղին 15ամեակը խորհրդանշող մոմավառութիւնը: Հետեւեալ տասնհինգ մոմավառները, շրջանի արի-արենոյշներու առաջնորդութեամբ, ներկայացան գեղեցիկ մոմերով զարդարուած սեղանը եւ իւրաքանչիւրը տարուան աշխատանքները գնահատող մոմը վառեց: Այսպէս.-

- Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղի հիմնադիր վարչութեան մոմը վառեց մասնաճիւղի հիմնադիր վարչութեան



Եղբ. Ալէք Արարատեան

անդամ եղբ. Թովմաս Տէօքմէճեան.
- Սեւակ եւ Սարին Լիոն, ի յիշատակ իրենց մեծ հօր՝ Կարպիս Էօրմէսէքեանին.

- Տէր եւ տիկ. Հրայր եւ Մարալ Լիոն.
- Տէր եւ տիկ. Հրայր եւ Մարալ Արարատեան, ի յիշատակ իրենց հօր՝ Արմէն Արարատեանի.

- Տէր եւ տիկ. Վարդան եւ Հելէն Գրիգորեան.
- Տէր եւ տիկ. Սահակ եւ Արմինէ Թադէոսեան.

- Տէր եւ տիկ. Արա եւ Անի Ղանիմէ.
- Մելին եւ Մարգար Աղախանեան.
- Տէր եւ տիկ. Արա եւ Ալին Չաղլասեան.

- Տէր եւ տիկ. Վիգէն եւ Վանիա Պապիկեան.
- Տիար Վարուժ Պետիկեան.

- Տէր եւ տիկ. Կէվիկ եւ Հիլտա Պէկինեան.
- Տէր եւ տիկ. Շահան եւ Սիլվա Տէր Մկրտիչեան.

- Տէր եւ տիկ. Շանթ եւ Լէսլի Օհանեսեան.
- Տիար Մանուկ Օհանեսեան.

16րդ տարուան աշխատանքները ներկայացնող մոմը վիճակուեցաւ Շրջանային Վարչութեան, որուն անունով վառեց ատենապետ եղբ. Սթիւ Արթիւնեան:

Մասնաճիւղին վարչութիւնը, առ ի երախտագիտութիւն մոմավառներու զոհողութեանց, իւրաքանչիւրը պարգեւատրեց յատուկ յուշատախտակով մը: Յուշանուէրները յանձնեց եղբ. Ռազմիկ Միմոնեան:

Մասնաճիւղին 15ամեակը խորհրդանշող կարկանդակը կտրեց մասնաճիւղին ատենապետը: Այնուհետեւ, իւրաքանչիւր սեղանին նուիրուեցաւ կարկանդակ մը, որուն մոմերը մարեցին բոլոր սեղանակիցները, բարձր գնահատելով մասնաճիւղին 15 տարիներու լուսաւոր երթը:

Շրջանային Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետ եղբ. Սթիւ Արթիւնեան: Ան առաջին հերթին բարձր գնահատեց այն հաւատաւոր

ԱՅՍ ԷՋՐ ԿԸ ՅՈՎԱՆԱԲՈՐԷ Հ.Մ.Ը.Մ.Ի «ՇԱՆԹ» ՄԱՍՆԱԾԻԻՂԸ

Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք 15 տարի առաջ համախմբուելով հիմը դրին Հ.Մ.Ը.Մ-ի «Շանթ» մասնաճիւղին, որ տարիներու ընթացքին լաւապէս ծառայեց երիտասարդութեան եւ համայնքին:

Եղբայրը շնորհաւորեց այն բոլոր քոյրերն ու եղբայրները, որոնք այնուհետեւ մասնաճիւղը հասցուցին ներկայ բարգաւաճ վիճակին:

Ապա, հաստատելով, թէ կազմակերպութեան մը մեծագոյն ուժը իր անդամներն են, եղբայրը հպարտութեամբ յայտարարեց, թէ «Շանթ» մասնաճիւղը անդամական թիւի նուազում երբեք չէ ունեցած: Ան կոչ ուղղեց լաւապէս հասկնալ երիտասարդները, քայլ պահել



անոնց հետ, աշխատանքի առիթ տալ անոնց եւ ընդգրկել զանոնք Հ.Մ.Ը.Մ-էն ներս, որպէսզի անոնք չհեռանան:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 32րդ Մարզախաղերու պատուոյ նախագահ եղբ. Վարուժ Պետիկեանի ընկերակցութեամբ, մասնաճիւղին 15ամեակը կերտող վարչութիւններու եւ անձ-


նագոհ անդամ-անդամուհիներու նուիրումը արժեւորող գնահատագիր մը յանձնեց ան մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Ալէք Արարատեանին:

Այնուհետեւ երեկոյն խանդավառեց երգիչ Գրիգոր Պոյաճեան:

Երեկոյին ուրախ մըրթնորդութիւն խանդավառած՝ եղան սրտաբուխ նուիրատուութիւններ:

Ձեռնարկը վերջ գտաւ ուշ գիշերին, ուրախու-

թեամբ յագեցած մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն, նոր 15ամեակներ կերտելու հեռանկարով:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europeshotel.am

www.europehotel.am



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՄԱՍՆԱԾԻՂԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ԱՔԱՆԴԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔԸ

Ուրբաթ, 18 Յունուար 2008ին, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղեմի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդին կազմակերպութեամբ, աւելի քան 70 արիներ եւ գայլիկներ տողանցքով մը Երուսաղեմի Ս. Յակոբեանց վանքէն ուղղուեցան Բեթղեհէմ՝ մասնակցելու համար Հայոց Ս. Ծնունդի տօնակատարութեան: *[Երուսաղեմի մէջ Ծնունդը կը նշուի հայկական հին տոմարով՝ 18 Յունուարին - «Մ.»]:*



Մասնաճիւղին շէփորախումբը դիմաւորեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանը եւ Պոլսոյ Պատրիարք Մեսրոպ Արք. ՍուքաՖեանը, ինչպէս նաեւ բիրաւոր ուխտաւորներ՝ Ժամանած Հայաստանէն եւ Պոլիսէն: Բեթղեհէմ հասնելով, սկաուտներ տողանցեցին մինչեւ Ս. Ծնունդի Այրը՝ նուազելով հայկական ազգային եւ օտար երգեր, արժանանալով բոլորին բարձր գնահատանքին:

Նոյն օրը, երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղեմի վարչական կազմը ներկայ գտնուեցաւ Հայոց Պատրիարքութեան կողմէ Ս. Ծնունդի առթիւ կազմակերպուած հիւրասիրութեան, որուն ներկայ եղաւ Պաղեստինի Նախագահ Մահմուտ Ապպաս: Այս առիթով, Ապպաս շնորհաւորեց հայ համայնքը եւ բարձր գնահատեց հայ եւ պաղեստինցի ժողովուրդներուն միջեւ հաստատուած եղբայրական սերտ կապերը:



Վերը՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները երուսաղեմի եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքներուն՝ Թորգոմ Արք. Մանուկեանին եւ Մեսրոպ Արք. Մուրաֆեանին հետ: Աջին՝ Պաղեստինեան իշխանութեան ներկայացուցիչ Մահմուտ Ապպասի եւ երուսաղեմի Հայոց Պատրիարքին հետ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Լիրանանի ֆուտպոլի Դ. դասակարգի ախոյեանութեան մրցումներու ծիրէն ներս, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի խումբը իր մասնակցութիւնը բերաւ Լեոնալիրանանի նահանգի Գ. խմբակի մրցումներուն: Խումբը խաղաց 4 մրցում եւ արձանագրեց 2 յաղթանակ եւ 2 պարտութիւն, նշանակելով 11 կոլ եւ ստանալով 10 կոլ: Խումբին մրցակիցները եղան Հիլալ Նասր (3-1), Ախա Հարէթ Հրէյթ (1-4),

Ռայէ (1-4) եւ Իսթիքլալ (6-1): Ստրեւ՝ խումբին անդամները.- ԲԵՐԴԱՊԱՀՆԵՐ.- Գօգօ Խոնիկեան եւ Յովիկ Գէորգ: ՅԵՏՍԱՊԱՀՆԵՐ.- Շանթ Զարպաշեան, Յարութ Ասատուր, Յարութ Քէչէճեան, Լեոն Խաչերեան, Փանոս Ժիրաօղլանեան, Խաթակ Դարբինեան եւ Յակոբ Տէմիրճեան: ՄԻՋՆԱՊԱՀՆԵՐ.- Բաֆֆի Աւետիսեան (խմբապետ), Յարութ Մունջօղլեան, Վարդան Յարութիւնեան, Սեւակ

Գալֆայեան, Յակոբ Կիւլիմեան, Սաքօ Աւետիսեան, Ռազմիկ Մնակեան, Յակոբ Համայեան, Գրիգոր Ֆէնտեան եւ Գէորգ Գուշեան: ՅԱՌԱՋԱՊԱՀՆԵՐ.- Մկօ Օտապաշեան, Ժազ Պէրպէրեան եւ Գօգօ Ազնաւուրեան: Խումբին մարզիչն է Յովիկ Կիրակոսեան, իսկ յանձնախումբի անդամներն են եղբայրներ Կիրակոս Մարտիրոսեան, Անդրօ Յարութիւնեան եւ Ներսէս Մելքոնեան:

ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔ

Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ

Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնակցութիւնը ըսկառաւ Խորհուրդին հովանաւորութեամբ, մասնաձեւով խմբապետական կազմը Կիրակի, 3 Փետրուար 2008ին, Բարեկենդանի տօնին առիթով կազմակերպեց խրախճանք մը՝ մոկլի, գայլիկ եւ արծուիկ խումբերուն համար, մասնաձեւով «Երուանդ Տէմիրճեան» սրահին մէջ: Սկառաւ Խորհուրդը այս առիթով հրաւիրած էր «Ուրախ տարեդարձ» խմբակը, որ պատրաստած էր զանազան խաղեր եւ զաւեշտներ՝ Բարեկենդանի խմաստը ներկայացնող:

Մոկլի, գայլիկ եւ արծուիկ խումբերու բոլոր քոյր-եղբայրները ծպտուած էին զանազան տարազներով, մարմնաւորելով այլազան անձնաւորութիւններ: Խրախճանքը անցաւ շատ ճոխ մթնոլորտի մէջ: Ներկաները տուն վերադարձան ուրախ եւ Բարեկենդանի խմաստը լաւապէս ըմբռնած:



բայրները ծպտուած էին զանազան տարազներով, մարմնաւորելով այլազան անձնաւորութիւններ: Խրախճանքը անցաւ շատ ճոխ մթնոլորտի մէջ: Ներկաները տուն վերադարձան ուրախ եւ Բարեկենդանի խմաստը լաւապէս ըմբռնած:

ԵՂԲԱՅՐ ՅԱԿՈԲ ՔԻԻՐՏՕՂԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



**Կարպիս Գույումձեան
ԱԹԵՆՔ**

Անցնող տարի, իր վեթե-
րան գործօն անդամնե-
րէն եղբայրներ Պօղոս
Օղլուխեանը, Պետրոս
Բանիկեանը եւ Սերգօ
Իսկահատեանը կորսնցնելէ ետք,
Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի մասնաճիւղը վեր-
ջերս կորսնցուց վաստակաւոր այլ եղ-
բայր մը՝ Յակոբ Քիրիտօղլանեանը:

Եղբայր Յակոբ ծնած էր Ֆիքսի հայ
գաղթակայանը, 1949ին: Ան յաճախած է
տեղւոյն Ս. Կարապետ եկեղեցի-դպրոց

նախակրթարանը:

Փոքր տարիքէն Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի
մասնաճիւղին անդամակցելով, ան
եղած է գայիկ, սկառտ եւ ապա՝ մաս-
նաճիւղի վարչական: Տարիներ շարու-
նակ եղած է մասնաճիւղի Փոլիթպոլի
խումբի պատասխանատուներէն, այս
պատճառով ալ փաղաքշականօրէն իրեն
կու տային յունական «Օլիմփիաքոս»
Փոլիթպոլի խումբի պատասխանատուի
Տայֆաս մակդիրը:

Համեստ նկարագիրի տէր տղայ մըն
էր ան, որ միշտ յարգանք կը վայելէր իր
չըջապատին մէջ: Ամուսնացած էր Սոն-
իա Չափարեանի հետ եւ բախտաւոր-
լած երկու զաւակով՝ Յովհաննէս եւ

Արտեմիս:

Եղբայր
Յակոբին
յուզար-
կաւորու-
թիւնը տե-
ղի ունեցաւ Նէոս Գոզմոսի
Ս. Կարապետ եկեղեցոյ մէջ: Դազալը
ծածկուած էր Հ.Մ.Ը.Մ.ի դրօշով: Արա-
րողութեան հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի
Շրջանային եւ Աթէնքի մասնաճիւղի
վարչական անդամները եւ ծաղկեպսա-
կով մը իրենց յարգանքի վերջին տուրքը
մատուցեցին հանգուցեալ եղբոր յիշա-
տակին:

Խունկ եւ ծաղիկ քաղցր յիշատակիդ:

*Made from one single slice
of natural Australian opal*

Classique®
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com


ՀԻՔԻԱԹ

ՃՍՏԻԿ ԸՈՒՏԻԿԸ

**Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ**

Կ ար ու չկար ճատիկ ճուտիկ մը կար: Այս ճատիկ ճուտիկը օր մը ծածուկ կը մտնէ դրացիին պարտէզը:

Հիացած կը դիտէ կարմիր վարդերը... Որքան գեղեցիկ են, - կը բացագանչէ... Յանկարծ թուփէն վարդ մը կը փրթի ու կ'իջնայ պոչին:



Ճատիկ ճուտիկը վախցած՝ կը փախչի դուրս, կը վազէ՝ կը վազէ՝ ու կը հասնի Հաւիկ մայրիկին:

- Վա՛յ, հաւիկ մայրիկ, երկինքը փուլ կու գայ:
- Ա՛, ճատիկ ճուտիկ, այդ ուրկէ՞ իմացար, կը հարցնէ հաւիկ մայրիկը:
- Օ՛, ես իմ աչքերովս տեսայ, իմ ալանջներովս լսեցի, դեռ մէկ կտորն ալ պոչիս ինկաւ:
- Ի՞նչ կ'ըսես, փախչի՞նք, կ'ըսէ հաւիկ մայրիկը սարսափած...

Կը վազեն, կը վազեն ու կը հասնին բաղիկ մամիկին...

- Վա՛յ, բաղիկ մամիկ, կը ձայնէ հաւիկ մայրիկը, երկինքը փուլ կու գայ:
- Ա՛, հաւիկ մայրիկ, այդ ուրկէ՞ իմացար, կը հարցնէ բաղիկ մամիկը:
- Ճատիկ ճուտիկը կ'ըսէ:
- Ա՛, ճատիկ ճուտիկ, այդ ուրկէ՞ իմացար:
- Օ՛, ես իմ աչքերովս տեսայ, իմ ալանջներովս լսեցի, դեռ մէկ կտորն ալ պոչիս ինկաւ...

-Ի՞նչ կ'ըսես, փախչի՞նք, կ'ըսէ բաղիկ մամիկը:
Կը վազեն, կը վազեն ու կը հասնին սագիկ խաթունին...

- Վա՛յ, սագիկ խաթուն, կը ձայնէ բաղիկ մամիկը, երկինքը փուլ կու գայ:
- Ա՛, բաղիկ մամիկ, այդ ուրկէ՞ իմացար, կը հարցնէ Սագիկ խաթունը:

- Հաւիկ մայրիկը կ'ըսէ:
- Ա՛, հաւիկ մայրիկ, այդ ուրկէ՞ իմացար:
- Ճատիկ ճուտիկը կ'ըսէ:
- Ա՛, ճատիկ ճուտիկ, այդ ուրկէ՞ իմացար:

- Օ՛, ես իմ աչքերովս տեսայ, իմ ալանջներովս լսեցի, դեռ մէկ կտորն ալ պոչիս ինկաւ:
- Ի՞նչ կ'ըսես, փախչի՞նք, կ'ըսէ սագիկ խաթունը:
- Կը վազեն, կը վազեն ու կը հասնին հնդկահաւին...



(Շար. 1)

Ի՞նչ կը փԱՓԱՔԻՄ ԸԼԼԱԼ ԱՊԱԳԱՅԻՆ

ԱՐԽԻԻԱԳԷՏ

Արխիւագէտը կը հաւաքէ, կ'ուսումնասիրէ, կը դասաւորէ, կը նորոգէ արխիւները եւ զանոնք կը դնէ ժողովուրդին եւ յատկապէս գիտաշխատողներուն տրամադրութեան տակ: Ինչ որ իսկական փաստաթուղթ է եւ պէտք է պահուի (գրութիւն, նկար, ժապաւէն, նամակ...) կը պատկանի արխիւի:

Արխիւագէտի մը պարտականութիւնն է լաւ վիճակի մէջ պահել եւ մատչելի դարձնել արխիւները:

Արխիւագէտը կ'աշխատի քաղաքապետարաններու, պետական հաստատութիւններու, թանգարաններու կամ մեծ հաստատութիւններու մէջ:

Արխիւագէտը պէտք է պատմութիւն գիտնայ եւ բժախնդիր աշխատող ըլլայ:



ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ՄՈՂԷԶԸ



Մողէզները ս ո ղ ու ն կենդանիներ են: Անոնք օժտուած են չորս ոտքերով, սուր եղունգներով եւ երկար պոչով: Այս վերջինը մարմնէն երկու անգամ աւելի երկար կ'ըլլայ:

Մողէզներուն գոյնը կախեալ կ'ըլլայ իրենց բնակած տեղէն: Օրինակ, եթէ խոտերուն մէջն է՝ գոյնը կանաչ կ'ըլլայ, իսկ եթէ անապատի մէջն է՝ գոյնը սրճագոյն կ'ըլլայ:

Մողէզները կը սնանին միջատներով, որոնք կ'որսան իրենց երկար լեզուով: Անոնք կը սիրեն արեւը եւ երկար ժամանակ կը մնան արեւուն տակ: Մողէզները հետաքրքրասէր են: Երբ ձայն մը լսեն՝ անմիջապէս կ'ելլեն իրենց պահուլտած տեղէն:


Մողէզները տարօրինակ կենդանիներ են, անոնք թշնամիին ձեռքէն փախուստ կու տան... իրենց պոչը կտրելով: Անոնց պոչը կազմուած կ'ըլլայ ողներով ու ոսկորով: Պոչը ողէն կը կտրուի եւ անոր համար քանի մը ամիսէն նոր պոչ մը «կը բուսնի»:

ՀԱՆԵԼՈՒԿ



Ո՞վ է, ի՞նչ է: Ձեռք չունի, ոտքեր չունի, դուռ կը բանայ: (Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր այսօր):





Էլի Հուլիշեան

«ՄԱՐՉԻԿ»Ի «ՔԱՋԱԼԵՐ ԱՆՂԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւն: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱԳԱԳՆԵՐԷՆ Ազատուհի Դանիելեան, Վահրամ Դանիելեան, Լենոն եւ Թագուհի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիւլեան, Յակոբ Թոքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էիրամեան, Արթօ Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճեթեան, Բիւզանդ Լախոյեան, Հրանդ Տէտեան, Արթին Մաժակեան, Արա Իմամեան, Պետրոս Պաքըրճեան, Բարգէն Կարապետեան, Լենոն Նաճարեան, Գառնիկ Նազարեթեան եւ Կարապետ Ն. Թոփեան:

ՅՈՐԴԱՆԱԼԷՆ Ծորճ Տաքեան:



www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. «Էն.Պի.էյ.»ի կազմերէն (երեք բառ):
2. Վիրաւոր - «Mimosa nilotica» ծառին պտուղը:
3. Արմէն Գարոյի ծննդավայրը:
4. Արեւելեան Եփրատ - Յած, խոնարհ:
5. Բնակուած վայր - «Ֆորմիւլա 1»ի հոլանտացի մրցավարորդ՝ Քրիսթիան:
6. Լակ - Տառի մը տեղափոխուած դրացիները - Իգական անուն:
7. Ակռայ - Համանման - Խօսք:
8. Հօտի առաջնորդ այծ - Հայկական «մայր դետ» - Կրկնուած բաղաձայններ:
9. Խնդածաղիկ - Էական բայէն - Մզկիթի աշտաւրակ:
10. Կրկնուած ձայնաւորներ - Շարունակ - Թրիփոլի շրջաններէն (Հակ.):
11. Քաղցր ժպիտով - Առ հարիւր համեմատութիւն:
12. Ծաղկեղջյւ մը - Խրախուսել, գօտեպնդել:
13. Յարաբերական դերանուն - Երկրաչափական ձեւ մը:
14. Խաբբայ - Կարաւանի առաջնորդ արու ուղտ - Մէկը:
15. Շողկապ - Դրկից գիրեր - Կրկնուած բաղաձայններ - Իրերայաջորդ տառեր:
16. Գրաբար՝ ո՞ւր - Կրակի բոց:
17. Ցուցական ածական - Վիճակախաղի մասնակցող:
18. Պարսելոնայի արժանթինցի յառաջապահ:
19. Այրթոն Սեննա հո՛ն արկածահար մահացաւ - Լիբանանեան արաբատառ օրաթերթ:
20. Չայնանիչ - Հոգածուլթիւն - Լարուած:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ

1. Մարտունիի գիւղերէն - Ադամանդի ճեղք - 20 Ստացական ածական:
2. Պարագաներու յարմարող - Արգելական:
3. Վախկոտ, թուլասիրտ - Իրերայաջորդ գիրեր:
4. Ճատրակի հայրենի վարպետ - Դրկից տառեր:
5. Իգական «Նա» - Անարդար - Մեր հին դրացիներէն:
6. Իգական օտար անուն - Սիրոյ աստուածը՝ յունական դիցարանին մէջ:
7. Տառի մը դրացիները - Գերմանիոյ ֆուլթպոլի կազմերէն:
8. Խոկումի եւ ինքնագսպումի կերպ - Զգայուն բանաստեղծութեան թռիչքով - Ինք:
9. Տաղաչափեալ քերթուած - Ողորմէ՛ - Փորձանք:
10. Ամբողջութիւն (Հակ.) - Քրիստոսի տարիով (երկու բառ) - Իրանահայ օրաթերթ:
11. Թուրիկի ծննդավայրը - Միջազգային անձնաւորութիւն մը - Իգական օտար անուն:
12. Նորվեկիացի բեւեռախոյզ՝ Ֆրիտիոֆ - 2400 - Բողբոջ - Չեւ:
13. Առարկայ - Կոպիտ (Հակ.) - Մերձաւոր Արեւելքի պատմական երկիրներէն - Մեծ թմբուկ:
14. Վայրի կարոս - Հուր - Ողիմպիական դրօշին՝ Ափրիկէն խորհրդանշող գոյնը - Աղջիկ գաւակ:
15. Տառի մը դրացիները - Անպաշտպան - Կաթը հարել:



ԹԻՒ 167 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒՐԻՆԸ



ՄԵՐԻՏԻՆԵԱՆ

Հ.Մ.Բ.Մ. 2008

Հ.Մ.Բ.Մ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՆ ՀՈՄԵՆԵՏՄԵՆ ԿԱՄՊԵՆԻՅԱ

ՅՈՒՎՍԵՓԻԱՆ

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

MERDINIAN 34 SCHOOL

20

MERDINIAN 34 SCHOOL

MERDINIAN

YUSSEPIAN

YUSSEPIAN

SAHAG MESROB 9

SAHAG MESROB 6

SAHAG MESROB 27

SAHAG MESROB 6

SAHAG MESROB 1

SAHAG MESROB 5

SAHAG MESROB 1

SAHAG MESROB 34

SAHAG MESROB 34

SAHAG MESROB 34

SAHAG MESROB 34

SAHAG MESROB 34

SAHAG MESROB 34